

339.14

3-30

ԱՐԵԱՎ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
ԿՈՒՆՈՋԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ



Ս. Պ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻՅ

ՈԼԽՈՋՆԻԿԻ
ՀՈՒՇԱԳԻՐԸ
ՀՐԴԵՅՆԵՐԻ ԴԵՍ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԸԶՈՎ-ՊԵՎԺՈՎՆԵՆ ՅԵՐԿՐԵՅԻՆ ՀՐԵՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — 1936

09.07.2013

17 FEB 2010

ԱՐՇԱՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՈԼԵՈՉԱՑԻՆ
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Ս. Պ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻՑ

338.13:

3 — 30


ԿՈԼԵՈՉՆԻԿԻ ՀՈՒՇԱԳԻՐԸ
ՀՐԴԵՋՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Քաղաք. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

1012

1010

4/247



30. 7. 27

ԶԳՈՒՇԱՑԻՐ ՀՐԴԵՀՆԵՐԻՑ

Մինչ հեղափոխական շրջանում հրդեհներն այնքան էյին ընդհանրացած գյուղերում, վոր ըստ վիճակագրական տվյալների, «ծղոտե» Ռուսաստանը յուրաքանչյուր 25 տարում բոլորովին այրվում եր: Դրանից գոյացած ֆեասը միլիարդ վոսկի ռուբլիների յեր հասնում:

Շատերը դեռ հիշում են ցարիզմի սոսկալի ժամանակները, յերբ սովորական բան եր տեսնել ամբողջ գյուղով այրված «հրկիզյալներին»: Ամբողջ ընտանիքներ, յերեխաների հետ միասին, թափառում էյին քաղաքների փողոցներում. վոստիկանությունն ել քշում եր սրանց «գլխավոր» փողոցներլց:

Այժմ մենք ազատված ենք այդ կոշմալից. բայց կարելի՞ յե ասել, թե արդեն վերացրել ենք հրդեհները: Վոչ. թեև նրանց թիվը զգալապես պակասել ե, սակայն դեռ

շատ բան կա անելու՝ այդ դժբախտություն-
ներից իսպառ ազատվելու համար:

Մեր Միության մեջ աշխատավորներից
տակավին վոչ ամենքի համար բոլորովին
պարզ ե այն հարցը, թե հանրային գույքը
պահպանելու համար անհրաժեշտ ե զգուշ
կերպով վարվել կրակի հետ, այն կրակի, վոր
և՛ մեր զաջնակիցն ե ու ոգնականը մեր ա-
ռորյա կյանքում, և՛ մեր վոխերիմ թշնամին
ե, յերբ մենք անհոգ գտնվենք ու թույլ
տանք նրան դուրս գալ իր ոգտակար աշ-
խատանքի սահմաններից: Դա ամբողջապես
մեզանից ե կախված:

Հրդեհներից պաշտպանվելու գործը վերա-
բերում ե ընդհանրապես բոլոր աշխատա-
վորներին, բայց առաջին հերթին դա մեր
կոլխոզների հոգատարության առարկան ե
լինելու, վորովհետե քաղաքները համեմա-
տաբար ավելի քիչ են տուժում հրդեհների
պատճառով:

ԻՆՁԻՑ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԾԱԳՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԸ

Հրդեհների վերացման հոգատարությունն
ամենից առաջ այն պետք ե լինի, վորպեսզի
թույլ չտրվի հրդեհների ծագումը:

Իսկ այդ բանին կարելի յե հասնել, յեթե
կրակի հետ զգուշ վարվենք: Դրա հետ միա-
մին անհրաժեշտ ե լավ պատրաստություն
ունենալ հրդեհը հանգցնելու համար:

Յեթե հրդեհների առաջն առնելու կանոն-
ները մտքերումս լավ պահենք և ճշտու-
թյամբ էլիրառենք նրանք, կարող ենք ապա-
հով լինել, վոր կոլխոզին խոշոր ֆիաս չենք
հասցնի, անտուն և անհաց չենք մնա, կամ,
վոր ավելի ևս վատ ե, մեր առողջությունը
չենք կորցնի, հավիտյան հաշմանդամ չենք
մնա, իսկ յերբեմն ել՝ հրդեհի ժամանակ կամ
թե հրդեհի պատճառով ստացված այս կամ
այն հիվանդության հետևանքով՝ իսպառ
չենք կորցնի մեր առողջությունը:

Այսպես, ուրեմն, հրդեհների դեմ պայքա-
րելու համար առաջնակարգ նշանակություն
ունեն նախազգուշական միջոցառումները,
վորովհետե նրանց շնորհիվ հրդեհի ծագման
առաջն ենք առնում:

Կարգով գնենք ուրեմն այդ միջոցները, և
աշխատենք չմոռանալ դրանք:

Գյուղական վայրերում ծագած հրդեհնե-
րի պատճառները քննելով՝ ապացուցված
ե, վոր համարյա բոլոր հրդեհները ծագել են
մարդկանց անզգուշությունից:

Մի պատճառ միայն կա, վորի համար մարդ պատասխանատու չէ. դա բնության տարերային ուժերի՝ կայծակի կամ յերկրաշարժի գործողությունն է: Սակայն պետք է ասել, վոր կայծակից ևս հնարավոր է պաշտպանվել շանթարգել անցկացնելով:

Դա մի այնպիսի սարք է, վոր ողի միջից ելեկտրականությունը գետինն է տանում և հնարավորություն չի տալիս, վոր կայծակ գոյանա: Իսկ կայծակը մի մեծ ելեկտրական կայծ է: Թե ինչպես պետք է սարքվի շանթարգելը, այդ մասին կխոսենք ստորև:

Հրդեհների մյուս բոլոր պատճառները կախված են մեր անուշադիր վարմունքից կրակի և այն նյութերի հետ, վորոնք կրակ առաջացնելու կողմից վտանգավոր են:

Ավելի ուշադրությամբ կանգ առնենք այս պատճառների վրա:

ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԸ

Մեր Միության գյուղական վայրերում հրդեհները մեծ մասամբ առաջանում են վառարանների սարքին չլինելուց, նրանց անկանոն կերպով շինված լինելուց և այն

անուշադիր վերաբերմունքից, վոր ցույց է տրվում նրանց պահպանության համար: Գյուղական բնակարաններում շատ հաճախ կարելի չէ տեսնել այնպիսի վառարաններ, վորոնք համարյա քանդված են, տեղ-տեղ աղյուսները թափթփված, դռնակները կոտրված, ծխանի խափանիչներն ու փակիչները փչացած ու լաթերով, թղթերով և նույնիսկ ծղոտով խցված: Միթե մարդու համար հանցանք չէ այդ: Միթե չի կարելի ճարել մի հինգ հատ աղյուս ու մի բուռ կավ և ավագ՝ զնառված ու խախտված տեղերը կարգի բերելու համար:

Կավ տնատերը, գիտակից կոլխոզնիկը պետք է այդ մասին վաղորոք հոգ տանի ու մի տեղում պահած ունենա հասարակ նորոգության համար հարկավոր նյութերը:

Բացի դրանից, տեսեք ինչպես են շինվում մեզ մոտ վառարանները: Աղյուսները տնտեսելու համար իրարից հեռու յեն շարում, վորով և ստացվում են կավի շատ լայն շերտեր. կափն ու ավազը լավ չեն շաղախում, տեղա համար շաղախը չորանալուն պես թափվում է: Վառարանի հիմքը դնում են ուղղակի գետնի յերեսին, վորը վառարանի ծանրությունից նստում է, իսկ վառարան

ըրանը դրա հետեանքով ճեղքվածքներ ե տալիս:

Բացի սրանից, վառարան շինելու ժամանակ թուլլ են տալիս ուրիշ շատ և շատ թերի կողմեր, մոռանալով, վոր դրանից վաղ թե ուշ հրդեհ կառաջանա: Յերբեմն ել ուղղակի հանցավոր անփութություն են ցուցաբերում, վորի հետեանքով ել շատ շուտով հրդեհ ե ծագում: Մեր խոսքն այստեղ ծխանցքների մասին ե, վոր շինում են շենքի փայտե մասերին շատ մոտ. դրա հետեանքով տաք գազերը վառարանի միջից, յերբեմն նույնիսկ կայծերը ճեղքվածքներից դուրս գալով ընկնում են փայտեղեն մասերի վրա և վառում են նրանք: Այստեղից կրակն աննկատելի կերպով անցնում ե չերդակը և այն ժամանակ միայն տեսանելի յե դառնում նա, յերբ կրակը բռնած ե լինում ամբողջ տանիքն ու չերդակը:

Վառարանին լավ չեն հետևում նրա վառված ժամանակ. յեթե այդ միջոցին վառարանից կրակ ընկնի հատակին, հրդեհն անխուսափելի յե ու միաժամանակ սարսափելի, վորովհետե նա ուշ ե իմացվում:

Շատ անգամ վառած վառարանի մոտ, չորացնելու համար, կախ են տալիս ճեր-

վակեղեն, հադուստ կամ ցախ են դարսում: Այս պատճառով ևս հաճախ հրդեհներ են պատահում:

Յերբ վառարանը լավ չի վառվում, անխելահաս տանաբերն այդ դեպքում կերոսին, նավթ և այլ դյուրավառ հեղուկներ են ածում վառարանի մեջ: Դրանից համարյա միշտ պայթյուններ են առաջանում, վորոնք վերջանում են հրդեհներով և ծանր այրվածքներով նրանց համար, ովքեր այդ ձևով են վառարան կայնում:

Իսկ վորքան դժբախտություններ են պատահում վառարանների ծխանցքների մուրը ժամանակին չմաքրելու պատճառով:

Այդ մուրը շատ վտանգավոր ե. նա մի կպրոտ նյութ ե, վոր շերտերով նստում ե ծխանցքերի պատերին՝ թաց ու դժվար վառվող վառելիք, մանավանդ ցախ կամ փայտ գործածելուց:

Այդ մուրն ամեն ուր նստելով ծխանցքների պատերին, բավական հաստ կպրոտ կիտվածք ե կազմում, վորը վաղ թե ուշ անպատճառ պետք ե բռնկի:

Այդ բռնկումն այնքան ուժեղ ե լինում, վոր ծխանցքների պատերն են ճեղքվում. կրակն այդ ճեղքերից անցնում ե չերդակը,

ճարակելով այն բոլորը, ինչ-վոր կարող ե
այրվել:


Բացի դրանից, ծխնելույզից թռչող կայ-
ծերն ու մրի վառվող խանձողները հրդե-
հում են փայտե, ծղոտե կամ այլ դյուրա-
վառ նյութից շինված տանիքները:

Քիչ են նաև այն հրդեհները, վոր առա-
ջանում են ժամանակավոր վառարաններից.
այդպիսի վառարանները սարքվում են իբր
թե վառելիք տնտեսելու և սենյակները լավ
տաքացնելու նպատակով:

Դա մեծ սխալ է:

Այսպիսի վառարանները, վերջին հաշվով,
վառելիք ավելի յեն ծախսում, վորովհետև
նրանք տաքություն են տալիս միայն վառ-
ված ժամանակ. նրանց տաքությունը ցնդում
է ափսոս, ինչպես և դաշտում վառվող
խարույկինը: Այդպես կարճատև վառվող և
վոչ հավասարաչափ տաքացնող վառարան-
ների պատճառով շենքերը խոնավ են դառ-
նում ու փչանում են:

Բացի դրանից, ժամանակավոր վառա-
րանները շենքում առաջացնում են կեղտ,
մուր և վատ հոտ: Բայց գլխավորն այն է,
վոր նրանք միշտ հրդեհների պատճառ են
հանդիսանում, վորովհետև վատ են սարք-



Նկ. 1. Ծխանցքն այսպես չպետք է շինվի:

ված լինում. նրանց ծխնելույզները յերկաթից են շինվում և անցնում են շենքի փայտե մասերի միջով, առանց աղյուսե բարակ պատոցի:

ԴՆՁ ԱՆԵԼ, ՎՈՐ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀՐԴԵՀՆԵՐ ԶՄԱՐԵՆ

1. Վառարաններ շինելիս՝ հետամուտ մի լինեք եծանագին, բայց վատորակ վառարաններ ունենալու. այդպիսի վառարանները միշտ ել շատ քիչ են տաքացնում, սպառում են շատ վառելիք և հրդեհի տեսակետից ել վտանգավոր են: Լավ վառարանը միշտ իր ծախսը կհանի. նա և՛ շենքը կտաքացնի, և՛ ողը կմաքրի, և՛ քիչ վառելիք կսպառի ու հրդեհ չի առաջացնի:

Տուն տաքացնելու ամենալավ վառարաններից մեկն է համարվում ներկայումս խորհրդային ինժեներ Գրում-Գրժիմայլոյի հորինած վառարանը:

Գրում-Գրժիմայլոյի հորինած սխտեմի վառարանների գլխավոր արժանիքն այն է, վոր նրանք շատ տնտեսաբար են ծախսում վառելիքը (սովորական հոլանդական վառարաններից 40⁰/₀-ով պակաս), լավ տա-

քովթյուն են տալիս, մեծածավալ չեն, ածխահոտ չեն տալիս, վորովհետև չունեն վոչ ծխանի խափանիչներ և վոչ փակիչներ, տաքուլթյունն իզուր տեղը չի գնում, իսկ հրդեհի տեսակետից շատ քիչ վտանգավոր են, վորովհետև չունեն շեղադիր ծխնելույզներ և դժվարիմաց պտույտներ, ուր սովորաբար մուրն է կիտվում:

Ինժեներ Պոդգորոդնիկի ձեռքով կառարելագործված նույնպիսի վառարաններ շինվում են վոչ միայն շենքեր տաքացնելու, այլ նաև կերակուր յեփելու համար: Այսպիսի վառարանները «գյուղացիական ջերմասրահներ» են կոչվում:


Նրանք 2—3 անգամ քիչ վառելիք են սպառում, քան սովորական ռուսական վառարանները: Սրանք տաքացնում են նույնիսկ հատակը, ունեն ջուր տաքացնող կաթսաներ մշտական տաք ջրով, ու իրենք ել տաքանում են վերևից մինչև ներքև, այնինչ այդպես չեն տաքանում սովորական վառարանները: Այդպիսի պայմաններում սենյակի ամբողջ ողն է տաքանում, տաքուլթյունից անմասն չեն մնում նաև նրա (ողի) ներքին շեր-

տերը, ինչպես սովորական վառարաններինն է լինում*:

2. Հատակի կամ փայտե գերանների վրա չի կարելի վառարաններ շինել. նրանց համար պետք է շինվի աղյուսե կամ քարե հիմք, վոր խորացած լինի գետի մեջ մինչև բնահողը:

3. Վառարանն ու ծխնելույզը պետք է լավ անջատել փայտե պատերից, միջնորմներից, գերաններից և շենքի մյուս ալրերի մասերից, վորպեսզի սրանք տաքանալուց կամ կրակի հպումից չվառվեն: Այդ մասերը հարկավոր է աղյուսապատել, այդ դեպքում աղյուսի պատոցն ունենալու յե աղյուսի յերկայնքից վոչ պակաս հաստություն, այսինքն 27 սանտիմետր: Ծխանցքների պատերի հաստությունը պետք է լինի աղյուսի լայնքից վոչ պակաս կամ, ինչպես ասում են, «կես աղյուսաչափ»:

Ծխանքերը պետք է ամենաքիչը 60 սանտիմետր բարձր լինեն տանիքի կատարից: Դրա համար ավելի ձեռնտու յե, վոր ծխանը



Նկ. 2. Ծխանքը հարկավոր է ալսպես շինել:

* Գրում-Դրժիմայույի և Պոգորոզնիկի սխառմով վառարան շինելու տեղեկություններով հետաքրքրվողները կարող են առնչապես դիմել հրդեհային պաշտպանութան ծխնելուղային-վառարանային բաժնին (Ռոստով-Դոն, Բուդյոննովսկիյ պրոսպեկտ, 48|50).

դուրս բերվի տանիքի փեշով, նա շատ բարձր
կլինի, վորովհետև, ինչպես ասվեց վերևում,
նրան հարկավոր կլինի կատարի բարձրու-
թյանը հասցնելու և նրանից ել մի 60 սան-
տիմետր բարձր:

Ծխախոտի ռուղակի հերդակից պետք է տանվի՞ր դուրս բերվեն, առանց շեղադիր ծխնելույզների (բորովնկ)։ Իսկ յեթե հարկ լինի հերդակներում անցկացնել շեղակի ծխնելույզ, այսինքն ծխանի կողքի գնացած արմունկը, ապա այդ արմունկը 2 մետրից յերկար չպետք է լինի։ Ծխանի այդ արմունկը շարում են վոչ թե բարակ տախտակների, այլ ամուր, հաստ գերանների վրա, վորպեսզի արմուկի ծանրությունից տակդիրը չծռվի, ու ծխանի վրա ճեղգվածքներ չառաջանա։

4. Ծխաններն ու նրանց արմուհիները
չերդականերում հարկավոր ե ուղիտակացնել
կրով կամ կավիճով, վորպեսզի կարելի լինի
մուրի հետքով ճեղքվածքը նկատել ժամա-
նակին և ծեփել այն:

5. Յուրաքանչյուր վառարանի առջև, տախտակե հատակը հարկավոր ե յերկաթե թիթեղով պատել. այդ թիթեղն ունենալու յե 45 սանտիմետր լայնություն և 70 սանտիմետր յերկարություն (տանիքի թիթեղի մեկ

յերրորդ մասը): Այս թիթեղը կաշտականե
տախտակե հատակն այրվելուց, յերբ վա-
ռարտնի բերանից կրակ վայր ընկնի:

6. Վառարանի վառված ժամանակ հարկավոր է ուշադիր հսկողություն ունենալ նաև վրա: Թողնել վառող վառարանը և հեռանալ այդ շենքերի՝ չի կարելի:

7. Վառարանի մոտ չպետք է կախել կամ դնել դյուրավառ առարկաներ՝ վառելափայտ, հագուստ, տան իրեր և այլն:

8. Ծխանների մուրը վառելաշրջանի ընթացքում պետք է մաքրել յերկու ամիսը մի անգամից՝ փոչ պակաս, իսկ յեթե վորպես վառելիք գործ է ածվում թաց կամ ձյուլթոտ վառելափայտ, ապա հարկավոր է մաքրել ամիսը մի անգամ, թե չէ մուրը կարող է բռնկել:

9. Վառարանը վառելու համար վոչ մի
դեպքում չի կարելի դյուրավառ հեղուկներ
գործածել, ինչպես՝ կերոսին, նավթ, բենզին և
այլն: Այդպես անելով՝ թաց և վառ տեսակի
վառելանյութն ավելի լավ չի վառվի, վո-
րովհետև վառելանյութի յերեսին թափված
հեղուկը կվառի-կվերջանա. վառեյանյութը
դարձյալ կլինի խոնավ, և պայթյուն անպատ-
ճառ կարգավորվի:

10. Յեթե ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և հրդեհաշեջ հոկոդության թուլ-տվությամբ հարկավոր լինի ժամանակավոր վառարան դնել, ապա այդ վառարանը պետք է աղյուսից շինվի և հիմքում շարվի վոշ պակաս, քան յերկկարգ աղյուս:

Յերկաթե ծխանցքներից նույնպես հարկավոր է խուսափել. պետք է անցկացնել աղյուսե ծխանցքներ, վորոնք հաստատված լինեն ամուր, չծովող տակդիրների վրա: Իսկ յեթե յերկաթե ծխանցքներից խուսափելն անկարելի յե, այդ դեպքում պահպանեցեք հետևյալ կանոնները.

ա) հետևեցեք, վոր խողովակների (ծրխանցքների) արժուկները լավ նստած լինեն իրենց տեղերում, արանքներ չունենան և ինչպես հարկն է ծեփված լինեն.

բ) խողովակները, յուրաքանչյուր մետր յերկարության վրա, պետք է յերկաթալարով ամրացվեն առաստաղին՝ կախված դիրքով.

գ) յերկաթե խողովակները պետք է ամենաքիչը մեկ մետրի չափ հեռու լինեն շենքի փայտե մասերից. բայց յեթե այդ մասերը սվաղած են, հեռավորությունը կարող է լինել կես մետր:

Յեթե խողովակներն անցնում են փայտե պատի կամ միջնորմի միջով, ապա այդ պատի մեջ բացվելու յե մի ափսոսի անցք, վորի միջով անցնող յերկաթե խողովակը մի մետրի չափ հեռու լինի փայտից:

Վորպեսզի այդպիսի խողովակը կարողանա հաստատուն մնալ իր տեղում, բաց արված անցքը կարելի յե թիթեղով պատել, վորի միջով արդեն անցկացնել խողովակը կամ յերկաթալարով առաստաղին ամրացնել նրան կախված դեպքում:

11. Վառարանների և ծխանցքների նորոգությունն ինքներդ մի անեք, յեթե այդ անելու ձեռնհաս չեք. այդպիսի աշխատանքները հանձնեցեք հնուցագործ ծխնելույգ մաքրողներին, վորոնք պատասխանատու յեն իրենց աշխատանքի համար:

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՂՆԵՐԸ


Շատ հրդեհներ են պատահում նաև լամպերի, լապտերների և լուսավորության այլ աղբյուրների անկանոն կազմվածքի ու նրանց անփուլթ պահպանության հետևանքով: Նրանք շատ անգամ անկանոն կերպով են

տեղերին ամրացվում, դրվում են դյուրա-
վառ առարկաների մոտ, գործ են ածվում
նաև բարձր վտանների վրա հաստատված
տպակե ռեզերվուարով անկայուն լամպեր
տնից հեռանալիս՝ թողնում են առանց հակա-
դուլթյան, լամպի մեջ կերոսին են ածում
առանց այն հանգցնելու և շատ ուրիշ ան-
դգուշուլթյուններ են թույլ տալիս անելու
վորոնք և ուղղակի հրդեհ են առաջացնում
(նկ. 3 և 4):


ԻՆՁ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ, ՎՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՇՐԴԵՂՆԵՐ ԶԾԱԳԵՆ

Հետևեցեք, վոր ձեր գործածած լամպերը
լապտերները և լուսավորության մյուս հար-
մարանքները սարքին լինեն: Հենց վոր մի
բան փչանա, հիմնովին նորոգեցեք այն:

Յերբեք մի հանգստացրեք ձեզ այն խոս-
տումով, թե լուսավորության վորևե փչա-
ցած առարկան դուք կիրառում եք հիմա
միայն, ժամանակավորապես, անհրաժեշ-
տությունից հարկադրված և թե հետո նո-
րոգել կտաք ինչպես հարկն ե: Դա մի խա-
բուսիկ պատրվակ ե, վորովհետև, նախ՝ հըր-
դեհներն ըստ վորոշ ցուցակի չեն առաջա-



Նկ. 4. Լամպը ձևով կախված
չէր լեղել:



Նկ. 3. Լամպն առաջիկա չպետք
է կախել:

նում, այլ ծագում են այն ժամանակ, յերբ նրանց բոլորովին չեն սպասում. յերկրորդը՝ բավական է, վոր գեթ մի անգամ այսպես հանգստացնեք ձեզ, այնուհետեւ արդեն այնքան զգուշ չեք լինի, մտածելով, թե՝ քանի վոր այս անգամ այսպես հաջող անցավ, ինչո՞ւ հետագա անգամներն ել նույնպես լավ չանցնեն:

Ամենից լավն է նորոգության կարոտ լամպը կամ լապտերը նորոգելու տալ վարպետին: Դա ավելի եժանե կնտի, վորովհետեւ նախ՝ նրանք ավելի լավ կպահվեն և յերկրորդ՝ դուք տպանովված կլինեք հրդեհից:

Տան գործածության համար ձեր ունեցած կերոսինը, բենզինը և կրակի տեսակետից վտանգավոր մյուս հեղուկները պահեցեք վոչ թե տանը կամ սրահում, այլ փակ նկուղում կամ մառանում:

Այդ հեղուկները պետք է պահվեն մետաղե և վոչ ապակիե ամանների մեջ, վորոնք հեշտությամբ կարող են կոտրվել:

Այդ ամանների բերանը միշտ պետք է փակված լինի մետաղե պտուտակավոր խըցաններով. յեթե այդպիսիները չլինեն, ծայրահեղ դեպքում կարելի յե գործածել սո-

վորական խցաններ, բայց վոչ լաթերից կամ թղթից շինած, ինչպես այդ հաճախ անում են: Նույնպես հարկավոր չե կերոսինի կամ բենզինի շատ պաշար ունենալ:


Լամպերի մեջ կերոսին լցնելը յերեխաներին մի հանձնեք: Նրանք անփորձ լինելով՝ միշտ կարող են մի սխալ բան անել, վորից և կարող է հրդեհ առաջանալ: Յերեխաներին առհասարակ հարկավոր է հեռու պահել կրակից և ներշնչել նրանց, վոր կրակը և կրակի տեսակետից վտանգավոր իրերը շատ զգուշ և ուշադիր վարմունք են պահանջում իրենց հետ:

Լամպերը կերոսին լցրեք միայն ցերեկով, վորովհետեւ մթնության մեջ կերոսինը կարող է պետքից ավելի լցվել և վայր թափվել հատակին, իսկ սենյակում կրակ վառված ժամանակ լամպը կերոսին լցնելը բացահայտ կերպով վտանգավոր բան է:

Վառ լամպի մեջ կերոսին մի ածեք: Նրա գոլորշիները կարող են բռնկվել և լամպի ոեզերվուարի (նավթանոթի) կերոսինը վառել: Դրանից կարող է պայթյուն առաջանալ:

Դյուրավառ առարկաների մոտ կամ շենքի փայտե մասերի՝ պատերի, առաստաղի, միջ-

նորմաների և այլնի մոտ, ինչպես և վառարանների կողքին լամպեր մի կախեք ու մի դնեք:



Նկ. Ծ. Կախովի լամպն այսպիսի չպետք է գործածել:

Առաջին դեպքում՝ վառած լամպերից կարող են վառվել հիշյալ առարկաները:

Յերկրորդ դեպքում՝ լամպերի միջի կերոսինը կարող է սաստիկ տաքանալ, և արտազատվող գոլորշիները կարող են բռնկվել: Լամպերը կախելու կետերն ու մեխերը


պետք է ամուր մխված լինեն պատերի կամ առաստաղների մեջ:

Առաստաղի այն մասը, վոր գտնվում է լամպի գլխին, պետք է յերկաթապատել թիթեղի փոքր կտորով: Թիթեղի տակ հարկավոր է դնել կավի մեջ թրջած թաղիք (քեչա): Ավելի լավ է կախովի լամպի ապակու գլխին փոքրիկ գլխադիր կախել՝ ամրացնելով այն շղթայիկին կամ յերկաթալարին, վորից կախ է արված լամպը: Այդ դեպքում գլխադիրն է կլանում բոցի ջերմությունը, իսկ առաստաղը չի տաքանում: (Նկար 5 և 6):

Նմանապես, յեթը լամպը պատից եք կախնում, հարկավոր է պատի այդ տեղը նույնապիսի թիթեղով պատել, թիթեղի տակ նախապես թաղիք դնելով: Կեռը կամ մեխը պետք է պատի մեջ զարկել դեպի վեր թեքված: Լամպը պետք է կախված լինի ուղիղ: Նա վնչ դեպի առաջ թեքում պիտի ունենա, վնչ ել դեպի կողք:

Յեթե գիշերը հարկավոր լինի լապտերով բակ դուրս գալ՝ անասուններին նայելու կամ այլ նպատակով, այդ դեպքում լապտերը չդնեք ուր վոր պատահի, որինակ՝ կերամանի, պատահաբար դարսված տախտակների վրա: Ամենից լապն է առաջուց

մեխ խփել պատին կամ առաստաղին, ու հարկավոր ժամանակ դրանց վրա կախել լապտերը, բայց այնպես, վոր կրակը հեռու լինի ծղոտից ու խոտից:



Նկ. 6. Կախովի լամպն այնպես է հարկավոր դրժածել:

Չպետք է կամպերով, առանց լապտերի մոմերով կամ միայն լուցկիներով ախոռը մտնել:


Ավելի լավ է ճարել այն լապտերը, վորը

«չղջիկ» է կոչվում. նա քամուց չի վախենում, չրդեհի տեսակետից ել համեմատաբար ավելի անվտանգ է: (Նկար 7):

Բակի լապտերները պետք է ապակեծածկ լինեն և հաստատուն կերպով (այսինքն առանց ճոճվելու) ամրացվեն կամ հատուկ կանգնեցրած սյուների կամ բակի ծածկերի հիմնական սյուներին: Լապտերներն այնպես է հարկավոր ամրացնել, վոր անկարելի լինի դիպչել նրանց՝ սայլերի բարձրացրած քեղիններով և կամ լծված ձիերի լծադեղներով (դուգաններով):

Լապտերների ապակիները դրսից պաշտպանված են լինելու յերկաթալարե հաստ ցանցերով, վորպեսզի լապտերին հարված հասնելիս՝ ապակիները չջարդվեն:

Արգելվում է լապտերն ամրացնել բարակ տախտակե պատերին: Լապտերների միջի լամպերն, առանց տեղից շարժվելու, պետք է ամուր նստած լինեն իրենց բներում կամ մեռադե շարժուն (նեղս խոթվող) դրոցների



Նկ. 7. «Չղջիկ» կոչված լապտերը:

վրա. ամենալավն ե՛ւ լամպերը զողել կամ գամել այդ դրոցներին:

Առանց հսկողութեան մի թողնեք վառած լամպերը, մոմերն ու լապտերները: Տնից դուրս մի՛ գաք և մի՛ պառկեք քնելու, յեթե լամպերը վառ են. նրանք հարկավոր ե հանգ-ցնել:

Յեթե այդ պահին պատահաբար հրդեհ առաջանա, մարդկանց բացակայութեան պատ-ճառով նա շուտով չի իմացվի:

Լուսավորութեան համար կիրառեցեք մի-այն մետաղե ռեզերվուարով լամպեր, վո-րոնք նստած են կաջձ և ծանր վոտքերի վրա:

Ելեկտրական լուսավորութիւնը, վոր պա-կաս վտանգավոր ե, քան կերոսինի լամ-պերը, նույնպես պահանջում ե ուշադրու-թիւն և զգուշութիւն:

Այս տեսակ լուսավորութեան ժամանակ պետք ե յերկյուղ ունենալ այսպես կոչված հաղորդալարերի կարճ միացումից (գամի-կանիյե), այսինքն նրանց բռնկումից, վոր հետեանք ե մերկացած մետաղալարերի իրար հետ միացումից: Վորպեսզի այս ավելի պարզ լինի, տեսնենք՝ ինչպես ե հորինված ելեկ-տրական հաղորդալարը:

Յեթե վերցնենք մի կտոր հյուսած լար

(շնուրոկ), վոր տներում են անցկացնում ելեկտրական լամպիկներին միացնելու հա-մար, ապա կարելի յե տեսնել, վոր այդ լարը կազմված ե յերկու միատեսակ լարերից: Դրանք են, վոր հաղորդալար են կոչվում, վորովհետե նրանց միջով ե անցնում ելեկ-տրական այն հոսանքը, վոր գալիս ե ելեկ-տրակայանից: Յուրաքանչյուր այդպիսի լարի մեջ գտնվում ե պղնձե կամ ալումինե մե-տաղալար, վոր ծածկված ե ռետինե շապ-կով, իսկ շապիկը պատած ե թելի փաթա-թանով:

Այս ռետինե շապիկը վրայի փաթաթանի հետ միասին կոչվում ե հաղորդալարի իզո-լյացիա (մեկուսացում):

Յեթե մերկացած հաղորդալարերն իրար կպչեն, այդ դեպքում կառաջանա վերը հիշ-ված կարճ միացումը, վոր առաջ ե բերում կայծակի նմանող ուժեղ բռնկում. այս բռն-կումից ե ծագում և հրդեհը:

Յերբեմն յերկու հաղորդալարեր միասին վոլորված չեն լինում, այլ յուրաքանչյուրն անց ե կացվում առանձին և ամրացվում ե ապակիե կամ ճենապակիե (ֆարֆորե) գըլ-խիկներին, այսպես կոչված իզուլյատորներին (մեկուսիչներին):

Յեթե այսպիսի լարերը թուլանան ու կախվեն, կամ յեթե նրանց վրա վորևե քան ընկնի, նրանք կարող են միանալ, ու այն ժամանակ դարձյալ կարճ միացում առաջ կգա:

Դրա համար հարկավոր է շատ զգուշաբար վարվել լարերի հետ՝ ձեռք չտալ նրանց, նրանց վրա փոշինչ չկախել, նրանց մոտիկ կամ նրանց մեջտեղից մեկեր չխփել և, յեթե ելեկտրականությունը գործել դադարի, անձամբ փոչ մի նորոգում չանել:

Նույնպես հարկավոր է լարերը խոնավությունից պահպանել, վորովհետև թացությունն էր միջով ելեկտրական հոսանք անցկացնելու հատկություն ունի:

Դրա համար նա կարող է ծառայել վորպես մի կամուրջ, վորով մեկ լարի հոսանքը կարող է միանալ մյուս լարի հոսանքին և կարճ միացում առաջացնել:

Բացի դրանից, թացությունն ավերում է վրայի փաթաթանը, վորը թրջվելուց փտում է, և այդ դեպքում լարերը մերկանում են:

Յերբ սվաղում են ու սպիտակացում այն շենքերը, վորոնց պատերին ելեկտրական լարեր են անցկացված, այս վերջինները

պետք է հանել իզոլյատորների վրայից, վորովհետև կիրն ու կավիճը ծածկում են լարերը և քայքայում նրանց իզոլյացիան:

ԿՐԱԿԻ ՇԵՏ ԱՆՁԳՈՒՅՇ ՎԱՐՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ԾԱԳԱԾ ՇՐԴԵՆՆԵՐԸ


Կրակի այս պատճառը բացառապես արդյունք է անխուժուլթյան և հանցավոր անհոգության:

Սրանց թվին է պատկանում նախ և առաջ ծխելը՝ ուր վոր պատահի, նույնիսկ այն տեղերում, ուր նա բացարձակապես վտանգավոր է, որինակ՝ գոմերում, կալերում, մալարաներում, խոտանոցներում, զարաժներում և բոլոր այն տեղերում, ուր դյուրավառ նյութեր կան:

Բակերում խարույկներ վառելը, վառարաններից հանած տաք մոխիրը բակերում կամ փողոցներում թափելը, անլապտեր լամպերով, իսկ յերբեմն ել ուղղակի մի այն լուցկի վառելով գոմեր, ձիանոցներ և դյուրավառ նյութերի մթերանոցները մոռնելը, բակերում ամառվա վառարաններ շինելը և ուրիշ սրանց նման բացարձակ անզգուշ վարմունքը բաց կրակի հետ՝ պատճառ են

դառնում մեծ և ավերիչ հրդեհների ծագմանը:

Կրակի հետ անզգուշ Վարմունքի պատճառով առաջացած հրդեհներից խուսափելու համար, կարճ ասած, հարկավոր եղեկավարվել հետևյալ կանոններով:




Նկ. 8. Ծխել չի կարելի այնտեղ, ուր դյուրափառ հեղուկներ կան:

Նյութեր կան, որինակ՝ խոտ, ծղոտ, տաշեղներ, կերոսին, բենզին, սկիպիդար և այլն:

3. Քնելուց առաջ, անկողնում պառկած յերբեք մի ծխեք. աննկատելի կերպով կա-

րող եք վառ պապիրոսը ձեռքերիդ քնել, պապիրոսը կրնկնի անկողնի վրա, ու այն ժամանակ հրդեհն անխուսափելի յե:

4. Ծխելիս՝ վառ պապիրոսը մի դնեք ուր վոր պատահի, կարող եք պատահաբար մոռանալ ձեր պապիրոսը. այդ դեպքում նրա կրակից կարող են վառվել այն դյուրակեզ առարկաները, վորոնց վրա կամ վորոնց կողքին դրել եյիք ձեր պապիրոսը:



Նկ. 9. Անկողնում պառկած չի կարելի ծխել քնելուց առաջ:

5. Յերեխաների ձեռքը պապիրոս և լուցկի մի տաք:

6. Գնացքով, ավտոմոբիլով և ձիով ճանապահ գնալիս՝ չհանգցրած պապիրոսների

մնացորդներ և լուցկիներ մի՛ գցեք, վորովհետև նրանք հեռու թռչելով կարող են ընկնել վորևէ դուրավառ առարկայի վրա և հրդեհ առաջացնել:

7. Բակերում խարույկ մի վառեք, յեթե շենքերը կամ բաց տեղում դիզված ծղոտը, խոտը, վառելափայտը և այլ դուրավառ առարկաներն ու մթերքները 10 մետրից պակաս հեռավորության վրա յեն խարույկից:

8. Անտառներում խարույկ մի վառեք. անտառի հրդեհներն ահագին տարածություն են բռնում և վոչնչացնում են վոչ միայն մեզ համար թանկագին անտառանյութը, այլ և այն բոլորը, ինչ վոր պատահում է ճանապարհին:

Այդ տեսակ հրդեհներին շատ անգամ ճարակ են գառնում ամբողջ դուռերը, վորոնք գտնվում են հրդեհով բռնված անտառներում կամ նրանց մոտերքը: Անտառի հրդեհի դեմ պայքարը շատ դժվարին է ու բազմաթիվ մարդկային ձեռքեր և պահանջում:

9. Սամովար մի գցեք բաց սրահներում, բակերում, շենքերին մոտիկ և ուրիշ տեղերում, վորոնք սամովար գցելու համար չեն սահմանված: Սամովարը պետք է գցել մնայուն վառարանի առջև, վորպեսզի յերկաթե

խողովակ - ծխնելույզը դրվի վառարանի մեջ հատկապես դրա համար բացված ծխանցքում:

10. Վառարաններից դուրս բերված մոխիրն ու ածուխը մի թափեք ուր վոր պատահի, վորովհետև քամին կարող է հրահրել և ձգել ծղոտի վրա, և այն ժամանակ հրդեհն անխուսափելի յե: Ավելի լավ է դրանք դուրս թափեցեք բանջարանոցներում կամ շենքերից հեռու վորևէ տեղում: Յեթե մոխիրը գետնի վրա թափելիս՝ ձեռքի տակ շուր չգտնվի, վոր վրան շող տալով հանգցնեք, այդ դեպքում հողով ծածկեցեք կամ ավազով: Յերբեք չմոռանաք, վոր մոխիրը չափազանց լավ պարարտանյութ է, դրա համար յեթե մոխիրը հորերի մեջ հավաքենք, դրանով վոչ միայն հակահրդեհային միջոցառում գործադրած կլինենք, այլ և զգալի ոժանդակություն կհասցնենք կոլխողային անտեսությանը:

11. Վառարանից դուրս բերված ածուխները հանգցնելու համար, հավաքեցեք մետաղե ամանի մեջ և պինդ փակեցեք նույնպես մետաղե խուփով: Յեթե ածուխն այսպիսի ամանով թողնելու լինեք ներսը, շենքում, ամանը դրեք վոչ թե ուղղակի հատակին, այլ յերկու աղյուսի վրա:

12. Բնակելի տների չերդակներում վո-
չինչ մի դարսեք, վորովհետև դրանով դուք
հրգեն ծագելու վտանգն եք ավելացնում և
դժվարացնում եք նրան հանգցնելը:

13. Բակերում, սայլերի ճանապարհին և
նեղ փողոցներում ծղոտ, խոտ, ցախ, շինա-
նյութ և այլ առարկաներ մի կիտեք անկարգ
կերպով. նրանք բռնում են ամբողջ տարածու-
թյունը և անհրաժեշտաբար կեր են դառնում
կրակին ու նպաստում նրա ծավալմանը:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԾԱԳԱԾ ՇՐԴԵՂՆԵՐԸ

Իր հետեվանքներով հրդեհների ծագման
ամենածանր պատճառն է այս, վորովհետև
կրակին զոհ են դառնում նաև իրենք՝
հրդեհների մանկահասակ նախապատճառ
հանդիսացողները:

Իսկապես՝ այս հրդեհների համար մեղա-
վոր են ճանաչվելու վոչ թե յերեխաները,
այլ հասակավորները, վորոնք քիչ ուշադրու-
թյուն են դարձնում յերեխաների վրա, թաշ-
լատրում են նրանց կրակին մոտենալ, լուց-
կի յեն տալիս ձեռները և նույնիսկ վա-
ռարանը վառ ժամանակ նրանց մենակ տան՝

են թողնում: Յերեխաների՝ կրակի հետ խա-
ղալու հետեվանքով շատ անգամ խոշոր հր-
դեհներ են ծագում, վորովհետև յերեխա-
ներն՝ իրենց չարաճճիություններն անելիս՝
քաշվում են սովորաբար խուլ անկյունները,
վորպեսզի մեծերը նրանց չտեսնեն, չխան-
դարեն կամ չպատժեն: Դրա համար այս
տեսակ հրդեհներն սկզբում բավական յեր-
կար աննկատելի յեն մնում և միայն այն
ժամանակ են յերեվում, յերբ հրդեհն արդեն
մեծացել է:

Մանավանդ յերեխաները տեսնելով, վոր
իրենց չարաճճիությունը փորձանք է բերել
նրանց զլխին, փոխանակ ոգնության կան-
չելու, սկսում են դես ու դեն ընկնել և աշ-
խատում են թաքնվել:

Սյուպիսի հրդեհներից խուսափելու համար՝

1. Յերեխաների ձեռքը կրակ և լուցկի մի
տաք. նրանց մի ուղարկեք այնպիսի տեղեր,
ուր վառվում է կրակը և ուր նրանք մենակ
են մնալու:

2. Յերեխաներից հեռու պահեցեք կերոսինը,
բենզինը և կրակի տեսակետից վտանգավոր
մյուս հեղուկները:

3. Յերեխաների մեջ ծխելու զգվանք հա-
րուցեք, ուժեղացրեք հսկողությունը և բա-

յատրեցեք նրանց այն հետևանքները, վոր
կարող ե ունենալ այս վատ սովորութիւնը:
4. Յերեխաներին վառվող վառարաններին
մոտ մի թողեք մի հանձնեք նրանց վառա-
րան և լամպ վառել:

5. Մենակ մի թողեք յերեխաներին այն
սենյակներում, ուր կրակ կա (լամպ,
վառարան և այլն), և մի հանձնարա-
րեք այնպիսի աշխատանքներ կատարելու,
վորոնք կապված են կրակի կիրառման հետ:

6. Ամառը, դաշտային աշխատանքների
ժամանակ, կազմակերպեցեք մանկական մը-
սուրներ, հրապարակներ, ճամբարներ, վոր
յերեխաները միշտ հսկողութեան տակ լինեն:

ՀՐԶԳՈՒՄՆԵՐԸ (ԿՐԱԿ ՏԱԼԸ)

Հրգեհ առաջացնող պատճառների այս ձևը
ներկայումս մեզ մոտ ավելի հազվագեպ ե,
քան թե նախահեղափոխական շրջանում:
բայց, դժբախտաբար, մինչև այժմ դեռ գո-
յութիւն ունեն հրձգումների դեպքեր՝ գըլ-
խավորապես դասակարգային թշնամութեան,
անձնական վրեժխնդրութեան, հարբեցութեան,
խուլիգանութեան հողի վրա: Դրանով զբաղ-
վում են կուլակութեան մինչև վերջը գեո-

շխալշխալված միացորդները, վորոնք ամեն
կերպ աշխատում են վիժեցնել աշխատավոր
գյուղացիութեան բարեկեցութիւնը:

Հրձգումների դեմ պայքարի գլխավոր մի-
ջոցներն են՝ վստահելի անձերից կազմված
լավ պահպանութիւնը և բոլոր կոլխոզնիկ-
ների աշտուղ զգնութիւնը:

Դժբախտաբար մեզ մոտ, կոլխոզներում,
մինչև այժմ դեռ շարունակվում ե այն վատ
սովորութիւնը, վոր պահպանութեան համար
ուղարկում են ուրիշ աշխատանք կատարելու
Ֆիզիկապես անպետք մարդկանց: Բացի դեռ-
նից, այդպիսիները (վստահութեան տեսա-
նից) բավականաչափ ստուգված ել չեն
լինում: Դա ահագին սխալ ե, վորի համար
կոլխոզները չարաչար տուժում են:

Պահպանութեան համար կարելի չե ոգտա-
գործել ինվալիդներին, բայց միայն նրանց
այն կատեգորիաներին, վորոնք չեն կորցրել
իրենց ընդհանուր առողջութիւնը և ուժը:
Որինակ, վոտքերից զրկված կոլխոզնիկը, վոր
սակայն պահպանել ե առողջ մարդուն հա-
տուկ մնացյալ բոլոր հատկութիւնները, յե-
րեքի պահապան կարող ե լինել, յեթե միայն
նա զինված լինի և ձեռքի տակ ունենա
վորեն սղգանշանակ (սիգնալիզացիա)՝ հար-

կա՛վոր դեպքում ողնության տագնապ բարձրացնելու համար:

Բացի դրանից, անհրաժեշտ է անցկացնել բացատրական աշխատանք գյուղական բոլոր վայրերի աշխատավոր մասսաների միջև և անխնա կերպով դատի յենթարկել հրձիգների՝ կազմակերպելով ցուցադրական պրոցեսներ:

ԿԱՅԾԱԿԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՇՐԴԵՂՆԵՐԸ

Վերեվում նշեցինք, վոր դա հրդեհի այն պատճառներից է, վորի համար մարդիկ մեղք չունեն: Սակայն այս դեպքում ևս հնարավոր է պաշտպանվել և թույլ չտալ, վոր նույնիսկ կայծակ առաջանա. իսկ ծայրահեղ դեպքում մարդ կարող է նաև հեռացնել իրենից կայծակը:

Դրա համար պետք է շինել այսպես կոչված շանթարգելը, վոր կազմված է նիզակաձև ծայրապանակից (սուր բերան) և յերկաթալարից. սրա մի ծայրը միացած է ծայրապանակի հետ, մյուսը թաղված է գետնի մեջ կամ խրված է ջրամբարը, վոր ավելի լավ է, քան գետնում թաղելը:

Շանթարգելի սուր բերանն ամրացվում է

շենքի ամենաբարձր տեղին, յերկաթալարն ամենակարճ ճամբով շենքի միջով անցնում է դեպի ներքև՝ ապակի է կամ ճենապակի է իզույատորներն վրայով:

Յերկաթալարի ծայրը, ինչպես ասվեց, կամ գետնի մեջ են թաղում կամ խրում են վորևեքնական ջրամբարի մեջ (գետ, լիճ), ծայրին ամրացնելով մեկ քառակուսի մետր կամ քիչ ավելի մեծությամբ թերթավոր ցինկ կամ պղինձ:

Այն ժամանակ ելեկտրականությունը, սուր ծայրի և յերկաթալարի ուղղությամբ, մըըրկաբեր ամպերից աստիճանաբար անցնում է գետնի տակ, և կայծակ չի առաջանում: Իսկ յեթե կայծակը խփի ել, նա կդաշի ծայրապանակին և ազատ կուղղվի գետինը՝ առանց վորևեքնական պատճառելու շենքին:

Շանթարգելի սարքավորման ամբողջ գործը պետք է հանձնել այնպիսի մարդու, վոր ծանոթ է նրա կազմությանը:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՇՐԴԵՂՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԵՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կրակի հետ անզգույշ վարմունքը և անփութությունը չեն միայն, վոր պատճառ են դառնում մեծածավալ հրդեհների: Ինչքան ել

նրանցից սլաշտպանվես, աստուածներնայնիվ
վտանգը գոյություն ունի, և հրդեհներն
առաջանում են այլևայլ պատճառներով:

Այդ անկոչ հյուրին բնդունելու համար
լավ պատրաստվելու և դիմավորելու նպա-
տակով, կոլխոզի ամբողջ տնտեսությունն
այնպես պետք է կազմակերպել, վոր կրակը
վորքան կարելի յե քիչ աստարեղ գտնի ձա-
րակելու համար, և, յեթե հրդեհն այնուա-
մենայնիվ առաջանում է, այնպես անել,
վոր հեշտությամբ կարողանան նրան մարել
և թույլ չտան ընդարձակվելու:

Ստորեվ բերված կանոնները կատարելու
դեպքում, հրդեհները մեծ վնաս չեն պատճառի:

1. Շենքեր կառուցելիս՝ հետեւեցեք, վոր
նրանց միջև բաց տարածություններ լինեն,
վորպեսզի շենքերից մեկում հրդեհ ծագելիս,
կրակը մյուս շենքերին ել չանցնի: Շենքերի
խմբվածությունը հեշտացնում է կրակի
մեկ շենքից մյուսն անցնելը և ամբողջ թա-
ղեր բռնելը:

Հիմնական կանոնները, վորոնցով հարկա-
վոր է ոգավել գյուղերի պլանավորման ժա-
մանակ, հետևյալներն են.

Փողոցների լայնությունը պետք է լինի
25 մետր, իսկ նրբափողոցները — 15 մետր:

Գյուղացիական տնտեսողների համար հողա-
մասեր բռնել կարելի յե կամ փողոցի մեկ
կողմում կամ յերկու կողմերում. բայց բո-
լոր դեպքերում ել հարկավոր է փողոցի
յերկարությամբ վոչ ավելի, քան 180 մետր
տարածության վրա նրբափողոցներ բաց
անել: Յերկու նրբափողոցների միջև գտնված
տարածությունը կոչվում է թաղամաս (կվար-
տալ), վորի վրա գյուղացիական տնտեսողե-
րի 6 հողամասից ավելի չի թույլատրվում:

Գյուղացիական տնտեսողների համար հա-
կացված հողամասերի յերկարությունը (փո-
ղոցի ուղղությամբ) 30 մետրից քիչ չպետք
է լինի, իսկ խորությունը (նրբափողոցնե-
րի ուղղությամբ) վոչ պակաս, քան 120
մետր, յեթե նույն հողամասերի վրա յե նաև
կալատեղը, և 60 մետրից վոչ պակաս՝
կալատեղ չլինելու դեպքում: Յեթե թաղա-
մասերում կան գյուղացիական տնտեսողների
մասերի հողամասեր, վորոնք յերեսով նա-
յնպիսի հողամասեր, վորոնք յերկու փողոցները,
այսինքն յում են դեպի յերկու փողոցները, այդ
կազմում են յերկարագ հողամասեր, այդ
դեպքում նրանց հետին սահմանի միջև պետք
է թողնել դեպի յերկու նրբափողոցները
տանող և 15 մետր լայնություն ունեցող
կառանցքներ:

Գյուղացիական տնտեսողերի հողամասերի ձախակողմյան մասն ամբողջովին շենքերով չպետք է բռնվի. նրա մի կողքի սահմանի յերկարությամբ հարկավոր է շենքերից ազատ 3 մետր հողամաս թողնել, իսկ մյուս կողքի յերկարությամբ — 10 մետր:

Գյուղացիական տնտեսողերի հողամասի վրա կառուցված շենքերը պետք է իրարից բաժանված լինեն վորոշ տարածությամբ: Այդ բաժանող տարածության լայնությունը կախված է նրանից, թե շինվածքի պատերն ու տանիքն ինչ նյութից են կառուցված: Յեթե յերկու հարևան շինվածքներն ու նրանց տանիքները հրակայուն են (այսինքն՝ շինված են քարից կամ աղյուսից, իսկ տանիքը՝ յերկաթից, ետերնիտից), այդ դեպքում նրանց միջև դատարկ տարածությունը 6 մետրից պակաս չպետք է լինի: Յեթե հարևան շենքերից գեթ մեկը խառն նյութերից է կառուցված, այսինքն վորմերը մասամբ հրակայուն նյութերից են, մասամբ ել փայտե լինելով՝ հրակայունորեն պաշտպանված են (այսինքն՝ սվաղած են, աղյուսով յերեսապատված են), կամ ամբողջովին փայտից են կառուցված, այդ դեպքում, յեթե տանիքները հրակայուն նյութից են, շենքերն իրարից բա-

ժանող տարածությունը պետք է 9 մետր լինի:

Յեթե հարևան շենքերից վորևե մեկը փայտաշեն է և վոչնչով չի պաշտպանված, բայց տանիքը հրակայուն է, ապա բաժանող տարածությունը պետք է 12 մետր լինի:

Խրձանոցներն ու կալսարանները պետք է գտնվեն հողամասի սահմանից 10 մետր հեռավորության վրա: Փայտաշեն բաղնիքները շինվում են առնվազն 40 մետր հեռու մյուս շենքերից:

2. Այրվող հարևան շենքից մյուս շենքերն անցնող կրակից պաշտպանվելու համար ծառայում են ծառերը. նրանք մի կողմից չեն թողնում, վոր կայծերն ու խանձողներն անցնեն այն կողմ, մյուս կողմից ել՝ այրվող հարևան շենքի սաստիկ ջերմության զգալի մասն իրենց վրա ընդունելով՝ պաշտպանում են հրդեհվելուց այն շենքը, վորի առաջ տընկված են:

Գոյություն ունեցող կանոնների համաձայն, յուրաքանչյուր շինարարական վայր իր մի կողմում, փողոցի յերկարությամբ պետք է առանձնացնի 10 մետրից վոչ պակաս պաշտպանողական կաշատունկ հողամաս, վոր հատկացվում է ծառատնկման հա-

մար և վորի վրա վոչ մի շենք չպիտի կա-
ռուցվի:

Բացի դրանից, փողոցների յերկու կողմը,
բանուկ ճամբու յերկարությամբ, յերկու հո-
ղաշերտ ե հատկացվում ծառատնկման հա-
մար:

Նմանապես և նրբափողոցները պետք ե
յերկու կողմից ծառատնկված լինեն առնը-
վապն 2 մետր լայնությամբ:

Փողոցների և նրբափողոցների ծառա-
տունկները պահել ու պահպանելը հանձնա-
րարվում ե այն տնատերերին, վորոնց տան
առջև են գտնվում ծառատունկերը:

Հրդեհների ծավալումն արգելիլու նպա-
տակով՝ տնկելու համար կարող են պիտանի
լինել միայն սաղարթավոր ծառերը, ինչպես՝
կաղամախին, լորին, ուռին, կեչին, ակացին և
այլն, նույնպես և պտղատու ծառերը:

Ծառերը կարելի չե տնկել միակարգ,
յերկկարգ, յիռակարգ և քառակարգ:

Ծառերն այսպես տնկելու դեպքում, նրան-
ցից վոմանք ստվերի մեջ կմնան. այնինչ
կան ծառեր, վորոնք ստվերի չեն զիմանում:
Ծառերի այն տեսակները, վորոնք ստվերից
չեն վախենում, կոչվում են ստվեադիմաց-

կուն ծառեր: Երանց թվին են լորին¹, թզ-
կին², սնձենին³, ծփենին⁴, տանձենին, վայրի
շագանակենին: Իսկ այն ծառերը, վորոնք
ստվեր չեն տանում, կոչվում են լուսասե-
նե: Նրանց կարգին են՝ կեչին⁵, բարդին⁶,
կաղամախին⁷, ուռին, սպիտակ ակացին, սև
լաստենին⁸: Հետևաբար ծառերը բազմակարգ
տնկելու դեպքում, ստվեադիմացկունները
պետք ե տնկել կարգերի միջում կամ դեպի
շենքերը նայող կարգում:

Ծառերն աշնանն են տնկվում, յերբ ար-
դեն տերևաթափ են յեղած, կամ գարնան
սկզբին, յերբ դեռ բողբոջներ չեն արձակել:
Ծառ տնկելու հարմարագույն ժամանակը
գարունն ե. այդ ժամանակ հողը բավակա-
նաչափ թաց ե լինում, և արևից տաքացած:
Ջերմության և թացության ազդեցությամբ
ծառն արագորեն սկսում ե նոր արմատներ
ձգել, տերևներ ե արձակում և շատ ան-
նշան խնամքի չե կարոտ:

Տնկելու համար հարկավոր ե վերցնել
այնպիսի ծառեր, վորոնք 2 մետրից բարձր
չլինեն: Յեթե նրանք վերցվում են անտա-

¹ Լորի — լիպտ, ² Թդկի — կլոն, ³ սնձենի — ոյաբինա,
⁴ ծփենի — վազ, ⁵ կեչի — բերրիզա, ⁶ բարդի — ոսկնա,
⁷ կաղամախի — տալու, ⁸ սև լաստենի — սլեստ (Մ. Թ.)

ոից, ապա հարկավոր ե այնպիսիներն ընտ-
րել, վորոնք աճում են բացուսներում և
վոչ թավուտներում. այսպիսի ծառերն ավե-
լի ուժեղ են լինում և իսկույն ել բռնում են:

Ծառերն սնհրաժեշա ե տնկել յերկու,
յերեք և ավելի կարգ այն հաշվով, վոր
նրանք վոչ 4 մետրից մոտ և վոչ ել 10
մետրից հեռու լինեն շենքից. ծառերի
կարգի միջև $2\frac{1}{2}$ մետր բաց տեղ ե թողնվում:

Հետագայում յերբ ծառերն սկսեն իրար
նեղել, ծառատունկի կարգերը հարկավոր ե
նոսրացնել. դրա համար կտրում հանում
են ամենաթույլ ծառերը:

3. Ձեր տների փայտե պատերը հրակա-
յուն դարձրեք՝ կրախառն ավազով սվաղելով
նրանք:

Շենքերը ծածկեցեք հրակայուն նյութե-
րով, կղմինարով, ետերնիտով: Յեթե այս
նյութերը ճարել չհաջողվի, տանիքները ծած-
կեցեք կավաշաղախ ծղոտով: Այսպիսի տա-
նիքները դիմացկուն են, եժան և հրդեհի
տեսակետից ել անվտանգ: Բացի դրանից
նրանք մեծ քամիներից չեն վախենում:

4. Հոգ տարեք հրդեհային ջրամատակա-
րարման մասին, վորովհետև առանց ջրի
դժվար ե հրդեհին հաղթահարել:

Հարմար ճամբաներ բաց արեք դեպի
ջրամբարները, լճերն ու ավազանները:

Յեթե չկան լավորակ բնական ջրամբար-
ներ, ապա մոտակա ձորում պատվար շինե-
ցեք՝ գարնան հեղեղատն այնտեղ փակելու
համար: Այդպիսի պատվարներ շինելու
ժախսը մեծ չե, վորովհետև հիմնական նյու-
թեղեններն (ավաղ, հող, ցախ, ծղոտ) ամեն
տեղ ել կձարվեն:

5. Լուրջ ուշադրություն դարձրեք կու-
կառային հրշեջների կամավոր խմբեր կազ-
մակերպելու և սարքավորելու գործին. առանց
դրան հրդեհներ հանգցնելու գործը կանցնի
անկարգ, անկազմակերպ, հետևաբար և սակավ
արդյունավետ:

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԿՈՒԽՈՋՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՍ ՊԱՅՔԱՐ

Մենք դեռ նոր քննարկեցինք հրդեհների
այն պատճառները, վոր կարող են տեղի
ունենալ կյանքի ամեն տեսակ պայմաննե-
րում:

Կոլխոզներում, ուր տարվում ե արտա-
դրական աշխատանք գյուղատնտեսական մը-
թերքներ արտադրելու համար, բացի հրդեհ-
նդհանուր պատճառներից, կարող են լինել

նաև այնպիսիները, վորոնք կախված են աշխատանքի հատուկ պայմաններից:

Այսպես, որինակ, քանի վոր կոլխոզներում կան տրակտորներ, վորոնք բանեցնելու համար կիրառվում են նավթամթերքներ, դրա հետևանքով ել հրդեհի նոր պատճառներ են առաջ գալիս:

Նմանապես և բերքահավաքի ժամանակ վորովհետև շուրջը լինում ե մեծ քանակությամբ ծղոտ և ուրիշ դյուրավառ արտադրանք, այդ պատճառով ել դժվարանում ե նույն արտադրանքների մթերման վայրերը կրակից պահպանելու գործը:

Կենդանի լծկանների, դյուրավառ նյութերի մթերանոցների, անասնաբուժական ֆերմաների և այլնի պաշտպանությունը հատուկ պահանջներ ե ներկայացնում կոլխոզնիկներին և ամբողջ անձնակազմին: Ուստի առանձնապես հարկավոր ե մշակել և մշտբում պահել հետևյալը.

Տրակտորները պահպանելու համար: Այս պողպատե ձիերի խնամքը, վորոնցից յուրաքանչյուրը տասնյակ կենդանի ձիերի չե փոխարինում, նախ և առաջ այն պետք ե լինի, վոր ամեն տեսակ դիմազրկություն վերանա մեջտեղից: Հարկավոր ե, վոր ամեն տրակ-

տոր իր տերն հանենա, իր տրակտորիստը, վորն ամբողջապես և լիովին պատասխանատու յե մեքենայի աշխատանքի և անվթար պահպանություն համար:

Մնացյալ կոլխոզնիկներից վոչ մեկն առանց նրան չպետք ե ձեռք տա տրակտորին, այլ ամեն կերպ ոգնելու յե նրան տրակտորը պահպանելու և խնամելու:

Վորովհետև կերոսինը և մանավանդ բենզինը ցնդվող հեղուկներ են, դրա համար չի կարելի առանց խցանի թողնել դյուրավառ հեղուկ պարունակող անոթը: Հակառակ դեպքում այս հեղուկների գոլորշիները՝ չորս կողմը տարածվելով՝ պայթյունի վտանգ կառաջացնեն դյուրավառ հեղուկ պարունակող անոթից նույնիսկ 10 մետր հեռավորության վրա: Ուստի, բաց կրակը ձեռքին, այդքան տարածություն վրա չի կարելի նրան մոտենալ:

Կերոսին կամ բենզին լցնել տրակտորը կարելի յե միայն ցերեկվա լուսով: Գիշերվա աշխատանքների ժամանակ, ծայրահեղ դեպքերում այդ անել կարելի յե, սակայն անպատճառ բաց յերկնքի տակ և պայմանով, վոր տրակտորը լուսավորված լինի էլեկտրական լապտերներով: Այս պահանջը

վերաբերում է նաև բոլոր ավստրիականներին:

Կիզանյութ հեղուկը պետք է լցնել ցանցավոր ձազարով: Յեթե ձազար չճարվի և հարկ լինի հեղուկն ուղղակի բիդոնից (ամանից) լցնել մեքենայի բաքը, ապա բիդոնի բերանը հարկավոր է պինդ սեղմել բաք բերանին: Այսպես արվում է նախ նրա համար, վորպեսզի կիզանյութ հեղուկը չթափվի և յերկրորդն ել, վորպեսզի յերկու բերաններն իրար չզարկվեն, և այդ հարվածներին կայծեր չառաջանան: Հայտնի յեն դեպքեր յերբ այդ պատճառներից բենզինի պայթույթներ են տեղի ունեցել:

Բրիգադների կամ սյունաշարքերի (կոլոնների) տրակտորային կայանատեղերում հարկավոր է խոտը քաղել և ամբողջը վարել: Այս կայաններում տրակտորները դառա վորվում են խմբերով, մեկ տրակտորը մյուսից կես մետր հեռու. խմբի մեջ 10 տրակտորից ավելի չպետք է լինի. խմբերի միջյեղած տարածութունը 5 մետրից պակաս չպետք է լինի:

Խմբերն իրարից բաժանող տարածության վրա պետք է պահվեն հակահրդեհային միջոցներ, ինչպես՝ մեկ խորանարդ մետր մե-

ծություն ունեցող և չոր ավազով լեցուն արկղ՝ յերկութիով 10 — 20 դույնանոց յերկտակառ՝ չորս դույլով և գոնե մի հատ քիմիական ձեռքի հրշեջ գործիք:

Կիզանյութերի և քսելու նյութերի պահեստն առնվազը 40 մետր հեռու յե լինելու տրակտորների կայանից, իսկ յերթեկի բանուկ ճանապարհներից — առնվազը 30 մետր:

Պահեստի համար հատկացված տեղում խոտը հարկավոր է քաղել, ապա նույն տեղը վարել, ցանկապատել կամ խրամատել ու անպատճառ խոշոր գրերով տախտակի վրա գրել՝ «Կրակից զգույշ»:

Կիզանյութ պարունակող ցիստերները, տակառները կամ բիդոններն ամառվա տոթ յեղանակին պետք է թաց բրեզենտով ծածկված լինեն:

Պահեստին սպասարկող անձնակազմը պետք է ծանոթ լինի հրդեհաշեջ միջոցների ներգործությանը ու նրանց կիրառմանը:

Մեկին պետք է նշանակել վորպես պահեստի պահպանության համար պատասխանատու անձ. սրա ազգանունն ել պետք է գրվի և «Կրակից զգույշ» մակագիրը կրող տախտակի կողքին կախ տրվի:

Կոլոնների յեվ բրիգադների համար դառ-

տային աւելանալու մասին: Բան-
վորների բնակութեան համար հատկացված
վազոնիկներն ու վրանները պետք է տեղա-
վորել իրարից առնվազը 15 մետր հեռավոր-
ութեան վրա: Նրանք պետք է լուսավորեն
«չղջիկ» կոչված լապտերներով:

Նույնպես 15 մետր հեռավորութեան վրա
պետք է հաստատված լինեն վազոնիկ — ար-
հեստանոցները, բանվորների բնակատեղե-
րից առանձնացած:

Յուրաքանչյուր վազոնիկ՝ թե բնակելի և
թե արտադրական՝ ունենալու յե տակառով
ընդ որ ու յերկու դույլ կամ «Բոգատիր» № 1
տիպի ձեռքի բիմիական հրշեջ գործիք:

Վազոնիկներում և վրաններում ծխելն ար-
գելվում է:

Կոլոններում և բրիգադներում (տաքոր-
ներում) կերակուր պատրաստել թույլատր-
վում է տաքորից 50 մետր հեռավորու-
թեան վրա:

Սոհանոցի ոջախը պետք է հաստատված
լինի գետնի մեջ: Սոհանոցի շուրջը գտնված
հրապարակն անհրաժեշտ է վարել՝ նախա-
պես քաղելով խոտերը:

Սոհանոցի ծխնելույզները պետք է կա-
ծարակ ցանցեր ունենան:

Ամբողջ տաքորը հրդեհից պահպանելու
պատասխանատվությունը դրվում է կոլոնի
պետի կամ բրիգադիւրի վրա:

ՄՏԿ-ում, սովխոզներում, կոլխոզներում
յեկ բրիգադներում դյուրավատ հեղուկներ
պանել: Դյուրավատ հեղուկների (բենզին,
լեզրոին, կերոսին և այլն) հեղուկների պա-
շարները պետք է պահվեն հրակայուն հա-
տուկ պահեստներում կամ գետնափորնե-
րում, վորոնք մեկուսացված են լինելու:

Բացութեյա, մանավանդ տրակտորային և
ավտոմոբիլային գարաժներին մոտիկ տեղե-
րում նաւթամթերքներ պահելն արգելվում է:

Դյուրավատ հեղուկները բաց դուռներով
անդից տեղ փոխադրելն արգելվում է. դրա
համար պետք է ունենալ հատուկ մետաղե
փակ ամաններ (բիդոններ): Բենզինի աման-
ներն ունենալու յեն պայթումի առաջն առ-
նող պահպանակներ:

Դաշտային աշխատանքների համար հար-
կավոր է յեղած փոքրաքանակ բենզինը,
լեզրոինը և կերոսինը յեթե ժամանակա-
վորապես հարկ լինի պահելու, այդ դեպքում
այն տեղը, ուր դրանք պահվելու յեն, հար-
կավոր է 5 մետրի չափ լայնութեյամբ վա-
րել, պայմանով, վոր նա առնվազը 50 մետր

հեռավորութեան վրա գտնվի տնտեսից, հացաբույսերից, դեղերից, կալատեղից, տրակտորներին կայանից:

Դատարկված տարան (ամանը) պետք է իսկույն ամուր փակվի և լեցուն տակառներից, գարաժներից և բոլոր շենքերից առնվազը 50 մետր հեռու մի տեղում պահվի՝ կանոնավոր կերպով շարված:

Դյուրավառ հեղուկներն իրենց ամաններով աշխատանքի վայրը փոխադրել հարկավոր է կցուկներով (պրիցեպներ) կամ հատկապես այդ նպատակի համար հատկացված ավտոմոբիլով:

Դյուրավառ հեղուկները հարկավոր է լավ ճամբով փոխադրել, ժամը 30 կիլոմետրից վոչ ավելի արագութեամբ, իսկ վատ ճամբով փոխադրելու դեպքում — 20 կիլոմետրից վոչ ավելի:

Դյուրավառ հեղուկների պահեստները, բացի ցերեկներից, հարկավոր է լուսավորել ելեկտրական լուսավորութեամբ՝ «Բերգմանի» խողովակների մեջ առած լարերով, փակ արմատուրով և զրսից սարքած անջատիչով:

Պահեստներում վոչ մի կողմնակի տուարկա չպետք է լինի. թույլատրելի չէ շենքի մեջ լուղոտ լաթեր և խծուծներ ունենալ, նմա-

նապես թույլ չի տրվում այնտեղ դատարկ տարաներ պահել:

Այն շենքերը, ուր դյուրավառ հեղուկներ են պահվում, վոչ մի կերպ չպետք է տաքացվեն:

Նավթապահեստի մոտ, ինչպես և ընդհանրապես դյուրավառ հեղուկների պահեստների մոտ պետք է դրված լինի չոր մանր ավազով լիքը արկղ (մի խորանարդամետր տարողութեամբ) ու թիեր և ամենաքիչը 2 հատ «Բողատիր» № 3 ձեռքի քիմիական հրշեջ գործիք:

Կատեգորիկ կերպով արգելվում է ծխել և բաց կրակ վառել թե՛ պահեստի շենքում և թե՛ նրան մոտիկ տեղերում. այդ մասին պետք է համապատասխան մակագրութեամբ պլակատներ կախ տալ:

Այն ՄՏԿ-ի, կոլխոզների, սովխոզների տերիտորիաներում, ուր կան կիզանյութերի և դյուրավառ հեղուկների պահեստներ կամ մթերանոցներ, պետք է հետևյալ միջոցները կիրառել.

ա) ցխտերնները պետք է ունենան յերկաթ-բետոնե պատվանդան. այդ ցեստերնները պետք է ամենաքիչը 20 մետր հեռու լինեն շենքերից:

բ) ցիստերնները տերիտորիան պետք է ցանկապատված լինի յերկաթե փշալարերով և պարփակված՝ հողաթմբով:

գ) տերիտորիայի աչքի ընկնող տեղերում անհրաժեշտ է փակցնել կրակից նախազգուշացնող, հեշտ և պարզ կարգացվող այսպիսի մակագրեր՝ «Կրակից զգուշ», «Ծխելն արգելվում է»:

դ) դյուրավառ հեղուկը բռնկվելու դեպքում, նրան ջրով մարելու փորձ չպետք է անել, վորովհետև նրանից կրակն ել ավելի կբորբոքվի ու մեծ տեղ կբռնի. այսպիսի դեպքերում կրակն անհրաժեշտ է մարել միայն քիմիական հրշեջ գործիքով կամ կրակի վրա ավազ ցանելով:

Հակահրդեհային միջոցառումների պահպանությունը բեռահավաքի ժամանակ: Բերքահավաքի ժամանակ, իբրև կանոն, պետք է ունենալ հսկիչ գութաններ, ցանքսի յուրաքանչյուր 2 արտամասում (կլետկայում) 6 գութան, կամ մի-մի գութան արտամասի յուրաքանչյուր անկյունում:

Յերբ կոմբայնը կամ հնձիչ մեքենան հրնձելով առաջ է ընթանում արտամասով, անմիջապես նրա հետևից, խոզանի վրայով բըշում են տրակտորը՝ նույն խողանը վարելու

համար. վարել հորկավոր է 10 մետրից վոշ պակաս լայնությամբ:

Կոմբայնն ունենալու յե «Բողատիր» № 3 տիպի քիմիական 2 հրշեջ գործիք և մի բահ:

Ավտոմեքենաները կամ տրակտորները, վորոնք զբաղված են հաց փոխադրելով, պետք է ունենան մի-մի հատ հրշեջ գործիքներ նույն սիստեմի, ինչ-վոր և կոմբայնները, ու մի-մի յերկաթե թի:

Ավտոմեքենաների և տրակտորների թլփթփացնող գազահան խողովակները, բերքահավաքի աշխատանքի ժամանակ, պետք է ունենան կայծուրսիկներ:

Բերքահավաքի ամբողջ ընթացքում ծխելը խստագույն արգելված է լինելու աշխատանքի վայրում. այս մասին, աչքի ընկող տեղում, պետք է փակցված լինի հայտարարություն՝ «Ծխելն արգելվում է»:

Ծխելն արգելվում է նաև այն բանվորներին և կոլխոզնիկներին, վորոնք սպասարկում են հնձավայրն անցնող տրանսպորտին:

Այն վայրերում, ուր բերքահավաքն է կատարվում, կամ նրա սահմաններին մոտիկ հողամասերում, արգելվում է բացոթյա կրակ ու խարույկ վառել, ինչ նպատակ ել վոր նրանք ունենան:

Աշխատավորներին կերակուր պատրաստելու համար շինված խոհանոցները պետք է մեկուսացված լինեն. նրանք ամենաքիչը 50 մետր հեռու պետք է լինեն չհավաքված հացաբերքից, խրճերից, դեղերից և մեքենաների կայաններից:

Հրդեհաշեջ կամավոր խմբերի պետերը, բերքահավաքի ամբողջ ժամանակ, առանձնացնում են հատուկ հրդեհաշեջ ձիավոր պահակներ, վորոնք ամբացվում են առանձին արտաբաժինների:

Ձիավոր պահակները, յերեք ուր մի անգամ, գեկուցում են անում կամավոր խրմբերի պետերին իրենց արտաբաժնի պահպանության վիճակի մասին և ցուցմունքներ են ստանում հետագա աշխատանքի համար:

Ձիավոր պահակներն իրենց աշխատանքի միջոցին անմիջական կապ են հաստատում միլիցիայի որդանների հետ՝ պատասխանատվության կանչելու համար նրանց, ովքեր խախտում են հակահրդեհային կանոնները:

Հակահրդեհային պատժարարությունը բերք կալսելու ժամանակ: Հացահատիկների կալատեղի համար ընտրում են հարթ հրա-

պարակ, վորն ունենալու յե հարմար ճանապարհներ և առնվազը 500 մետր հեռու յե լինելու տներից և այլ շենքերից:

Կալի ամբողջ տերիտորիան (ծղոտ և մղեղ դիդելու տեղ, հնձիչ և թեղ քամող մեքենաների, շարժիչի կայանատեղ և այլն) շուրջանակի 5 մետր լայնությամբ պետք է հերկվի՝ նախապես բոլոր խոտերը քաղելով:

Լոկոմոբիլի կանգնելու տեղն ընտրելիս, ինչպես նաև ծղոտն ու մղեղը դիդելու տեղերը վորոշելիս, հարկավոր է աչքի առաջ ունենալ քամու ուղղությունը: Ծղոտն ու մղեղը դարսում են հացի դեղերից ամենաքիչը 100 մետր հեռու:

«Փորդղոն» սիստեմի տրակտորով ոգտվել արգելվում է, յեթե նրա հնձիչը գտնվում է ծղոտի դեղերից 30 մետրից պակաս հեռավորության վրա:

Հնձիչները շարժողության մեջ դնող տրակտորի փթփթացնող գազահան խողովակի առջև պետք է ջրով լեցուն հոր լինի:

Կալսելու ժամանակ լոկոմոբիլների խողովակներին հարկավոր է կայծորսիկներ հագցնել:

Կալատեղում ձխելն ու բացությա կրակ վառելը խստիվ արգելվում է:

կալերում պետք է ջուր լինի յերկու տա-
կառից վոչ պակաս, ամեն մեկը 10 — 15
դուլյանոց. տակառների մոտ 4 դուլյ:

Պետք է հետևել, վոր շատ մղեղ չհավաք-
վի. դրա համար հարկավոր է իսկույն փո-
խադրել այն կալատեղից:

Անմիջական լիցքի համար պետքից ավելի
կիզանյութ և քսելանյութ բերել կալատեղն
արգելվում է:

Կալատեղը լուսավորելու համար հարկավոր
է ելեկարական լույսն անցկացնել ըստ հնա-
բավորության տրակտորներից: Հակառակ
պարագային թուլյատրվում է «Դեմի» լապ-
տերները գործածել:

Սովխոզների և ՄՏԿ-ների կալերում, ուր աշ-
խատելու յեն միջանի կալսիչներ (13 հատ
և ավելի), անպատճառ հեռախոսային կապ
է հաստատվում մերձավորագույն հրդեհա-
շեջ խմբի հետ կամ պայմանական սիգնա-
լիզացիա (ազդանշանաբուլ): Յուրաքանչյուր
կալատեղի համար նշանակվելու յէ պատաս-
խանատու անձ՝ հակահրդեհային միջոցա-
ռումներն անցկացնելու համար:

Հրդեհները հանգցնելու նպատակով յու-
րաքանչյուր կալատեղ պետք է ունենա հրը-
դեհային հետնյալ ինվենտարը.

ա) հրդեհի վողրակ (տրուբա), կաշե խո-
ղովակների կոմպլեկտով.

բ) 2 տակառ՝ իր անիմներով և կազմով.

գ) 5 դուլյ:

դ) կիսատակառներում հավաքած ջուր՝
100 դուլից վոչ պակաս.

ը) 2 կարթացող (բագոն), 5 յեղան և
5 թի:

զ) ավազով արկղեր՝ կիզանյութի մոտ
դրած.

է) բրեզենտներ:

Հրդեհաշիջային ինվենտարներն իրենց ուղ-
ղակի նպատակին չոգտագործելու համար
մեղավորները դատի յեն յենթարկվում
ԱՊԽ-ի հատուկ վորոշման հիման վրա:

Բերքահավաքի և կալսելու ամբողջ ժամա-
նակ հրդեհաշեջ կամավոր խմբերի պետերը,
գյուղապետներն առանձնացնում են հատուկ
հրդեհաշեջ ձիավոր պահակներ (հսկիչներ),
վորոնց վերապահվում են վերը հիշատակված
իրավունքներն ու պարտավորությունները:

Հակահրդեհային միջոցառումների վերա-
բերյալ բոլոր ցուցմունքներն անմիջապես
պետք է կենսագործվեն:

Կալում աշխատող բոլոր մարդկանց հար-
կավոր է ծանոթացնել հակահրդեհային կա-

նուններն պահպանության, հրդեհը ծագելու դեպքում գործադրվելիք միջոցառումներն և տաճնապ բարձրացնող ազդանշանների հետ:

Յերբ կալսելն ընդհատվի (գիշերը հասնելուն կամ անձրև գալու պատճառով), կալում սահմանվում ե ուժեղացրած պահպանություն:

Պահեստների, խոտի յեվ ծղոտի պաշարի պահպանությունը: Բնակելի տերիտորիայի սահմանում խոտի և ծղոտի պահեստներ ունենալն արգելվում ե՝ յեթե այդ պահեստները 600 քառակուսի մետրից ավելի տարածություն են բռնելու: Այսպիսի պահեստակետերը թույլատրելի յեն միայն բնակելի վայրերի սահմաններից դուրս, 200 մետրից վոչ պակաս հեռավորության վրա:

Բնակելի տերիտորիայի վրա անասունների մեծածավալ կեր պահելը թույլատրելի յե այնպիսի հողամասում, վորը բռնում ե 600 քառակուսի մետրից վոչ ավելի տարածություն: այդ դեպքում անհրաժեշտ ե պաշտպանել միջանկյան դատարկ տարածությունների հետևյալ չափերը.

ա) անբնակելի և չտաքացվող շենքերի հողաբաժնի սահմանից՝ 20 մետր հեռու:

բ) բնակելի շենքերի հողաբաժնի սահմանից՝ 25 մետր հեռու:

գ) արդյունաբերական հրագործոն հիմնարկներ, հացահատիկների պահեստների, հանրային ոգտագործման վայրերի և այլ հողաբաժինների սահմաններից՝ 200 մետր հեռու:

Մեկ դեզի ծավալն, անկախ նրանից՝ բնակելի կետում ե դիզվում նա, թե՞ դրա սահմաններից դուրս, մակարդակի 100 քառակուսի մետրից ավելի չպետք ե լինի, իսկ բարձրությունը 6 մետր:

Մեծածավալ կերի պահեստի համար հատկացված հողամասը պետք ե պարփակված լինի ցանկապատով, փշալար պատով կամ խրամատով և պատնեշով:

Պահեստի տերիտորիան պետք ե շատ մաքուր պահվի. խոտերը, քոլերը և այլ բուսականություններ հարկավոր ե ժամանակին քղհանել:

Պահեստի համար հատկացված հողամասը պետք ե ապահովված լինի պատշաճ լուսավորությամբ՝ ելեկտրական կամ կերոսինի: Կերոսինի լապտերները պետք ե ամուր նստած լինեն սյուներին և առնվազն 5 մետր հեռու դեզերից և բարդերից: Այս տերիտորիայի վրա ծխել ու բացթյա կրակ վառելը պետք ե կատեգորիկ կերպով արգելված լինի:

Այս նպատակով հարկավոր ե ազդեր փակ-

ցնել հետեյալ մակագրով՝ «Ծխելը խոսիվ
արգելվում է»:

Հոգամասի այս տերիտորիան մուտք ու-
նենալն անպայման կերպով արգելված պետք
է լինի այն մարդկանց համար, վորոնք պա-
հեստի հետ վոչ մի գործ չունեն:

Հրդեհաշեջ ինվենտարի, ինչպես նաև պա-
հեստի և մեծածախ կեր պահելու տեղերի
սարքավորման անհրաժեշտ նորմը հետեյալն
է. յուրաքանչյուր դեզ կամ բարդ իրանից
100 մետրի չափ հեռավորության վրա պետք
է ունենա առնվազը 20 — 25 դուլյանոց ջը-
րով լի տակառ և յերկու դուլ «հրդեհի հա-
մար» մակագրով, 1 խողանակ (շվաբըրա),
2 կարթացող, 3 յեղան:

Բնակելի տների տերիտորիայի վրա խոտի,
ծղոտի պահեստ ունենալ թույլատրելի չէ.

ա) խոտնոցներում, խրձանոցներում, յեթե
սրանք մեկուսացված են բնակելի շենքի
անմիջական հարևանությունից.

բ) բակում, բաց յերկնքի տակ, պայմա-
նով, վոր դեզերը պարփակված լինեն ցան-
կապատով կամ չափարով:

Ընթացիկ կարիքների համար ու յերկու
որվա նորմայից վոչ ավելի պաշարով խոտ-
նոցներ սարքել թույլատրելի չէ կենդանի-

ների համար հատկացված շենքերի այն չեր-
դակներում, վորոնք գտնվում են անասուն-
ների կերային բաժնի գլխին և մեկուսաց-
ված են հարևան շենքերից:

Արտադրական, պահեստային և բնակելի
շենքերի չերդակներում անասունների կեր
պահելն արգելվում է:

Այն չերդակներում, վորոնք շինված են
գոմերի գլխին, թույլատրելի չէ անասուն-
ների կեր պահել, պայմանավոր սակայն, վոր՝

ա) այրելի ձեղունը՝ 2 սանտիմետրից վոչ
պակաս հաստությամբ՝ ծեփված լինի կավով
կամ ուրիշ հրակայուն պատվածք ունենա.

բ) տանիքը ծածկված լինի հրակայուն
նյութերով՝ կավահարդով, կղմինդրով, թեր-
թաքարով, ետերնիտով.

գ) շինվեն առանձին բաժանարար կամեր-
ներ, վորոնց մեջ պարփակված լինեն չեր-
դակներով անցնող ծխնելույզները:

ԻՆՁ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԿԻՐԱ-
ՌԵԼ ՀՐԴԵՂ ԾԱԳԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՍ

Այս գրքույկի սկզբում առաջինը, վոր
հրդեհների դեմ պայքարը տարվում է յեր-
կու ուղղությամբ՝ նրանց առաջացումը կան-
խելու ուղղությամբ:

Այս աշխատանքի մի կողմի՝ հրդեհի առաջն առնելու ուղղութեան հետ արդեն համառոտ կերպով ծանոթացանք: Հիմա տեսնենք՝ ի՞նչ պետք է անել, յերբ հրդեհն արդեն ծագել է կամ կասկած կա, վոր ծագել է:

1. Յեթե տան մեջ ածխահոտ գգաք, իսկույն հետամուտ յեղեք իմանալու և գտնելու այդ հոտի պատճառը:

Թե վոր պատճառը յերկուզալի բան չե, այսինքն՝ ծուխը կամ խանձահոտը դրսից է գալիս կամ առաջացել է պատահական անփութութիւնից (սամովարից կամ ծխնելույզի անցքը չբացած վառարան վառելուց և այլն), այդ դեպքում վախենալու առանձին հարկ չկա. հարկավոր կլինի միայն իսկույն սենյակի ողը մաքրել:

Իսկ յեթե հետազննումը յերևան բերի, վոր վառարանը կամ լուսավորութիւնը սարքին չեն, ապա պետք է անմիջապես միջոցներ ձեռք առնել սարքի բերելու նրանք և մինչև նրանք չսորոգվեն, վառելիքի և լուսավորութեան սարքավորումները չզործածել:

2. Յեթե տան մեջ հրդեհ յերևան գա, պետք է իսկույն մարելն սկսել և վոչ թե մօլորված պատեպատ ընկնել ու տան բո-

լոր իրերը դուրս հանել: Պետք է լավ իմանալ, վոր սկզբում հրդեհը մարելը շատ հեշտ է, նույնիսկ մի դույլ ջուրն ել բավական է, իսկ ժամանակ կորցնելուց հետո ամբողջ գետն ել հերիք չի անի կրակը հանգցնելու:

Ուստի շտապելով սկսեցեք կրակը մարելու և տնեցիներից վորհե մեկին իսկույն ոգնութիւն կանչելու ուղարկեցեք: Յեթե դուրդում կա հրդեհաշէջների կազմակերպութիւն, ապա ամենից առաջ պետք է նրանց կանչել: Յեթե այդպիսի կազմակերպութիւն չկա, այն ժամանակ կանչեցեք հարեւաններին, բայց տագնապ կամ խուճապ մի հարուցեք և հավար մի գցեք դուր տեղը:

Ձեր գույքը փրկելու լավագույն միջոցը վոչ թե իրերը տնից դուրս հանելն է, այլ կրակն արագութեամբ մարելը հենց սկզբում՝ քանի դեռ չի ընդարձակվել: Միևնույնն է, տնից բան դուրս չես հանի, իսկ հրդեհը մարելու կուշանաս:

3. Յեթե հրդեհը տան մեջ չի, այլ դուրսն է, բաւում, այդ դեպքում՝ բացի կրակը հանգցնելու համար կիրառված միջոցներից, ձեր զլխավոր ուշադրութիւնը, մինչև հրդեհաշէջ ոգնութիւնը հասնի, դարձրեք այն բանին, վորպէսզի հրդեհը մերձակա շենքերէն չանցնի:

Յեթե այդ շենքերը ծածկված են ծղոտով կամ յեղեգով, ապա ամենից առաջ հարկավոր է դրանք պաշտպանել կրակից:

Դրա համար պետք է տանիքը բարձրանան ավելներով կամ յերկար ճուղներով զինված մարդիկ, վորպեսզի թափ տալով մաքեն տանիքին ընկնող կայծերն ու խանձողները:

4. Յեթե այրվի ծխնելույզի մուրը, ամենալավն է չխանգարել այրվելուն, վորպեսզի մուրն ամբողջ վառի-սպառվի:

Դրանից չպետք է վախենալ, յեթե միայն ծխնելույզն իր ամբողջ յերկարությամբ ճեղքվածքներ չունի, տանիքն ել ծածկված է յերկաթով, կղմինդրով կամ կավածղոտով:

Չերգահուսում հարկավոր է մարդ կանգնեցնել մի դույլ ջրով ու ավելով՝ հետեվելու համար, թե ծխնելույզն այնտեղ ճեղքվածքներ չունի արդյոք. կայծեր նկատելու դեպքում նա պետք է ջուր շաղ տա և ավելով մարի թուած կայծերը:

Յեթե տանիքը ծղոտով է ծածկած, իսկույն պետք է մարել այրվող մուրը:

Դրա համար նախ և առաջ հարկավոր է վառարանում յեղած կրակը ջրով հանգցնել: Յերբեմն այս մեկ միջոցն ել բա-

վական է լինում, վոր այրումը դադարի, վորովհետև վառարանի ծուխն ու գոլորշին մարում են ծխնելույզի կրակը: Վառարանի մեջ հարկավոր է զգուշությամբ ջուր ածել, վոչ թե դուլներով, այլ քիչ-քիչ բաժիններով և շուտ-շուտ, որինակ՝ գավաթով, պնակով կամ ուրիշ վորևե ամանով:

Յեթե այդ շոգնի, հարկավոր է ծխնելույզը պինդ խլացնել ներքեվից, այսինքն վառարանի փակիչը, սողնակը և բերանի դռնակները պինդ փակել: Այսպես անելուց կրակն աստիճանաբար կանգ է առնում, վորովհետև ծխնելույզի մեջ ողի հոսանքն է դադարում, իսկ առանց ողի այրումն անկարելի է:

Դրա հետ միաժամանակ չպետք է մոռանալ տանիքի վրա վառվող կայծերն ու մրի կտորները հանգցնելու:

Վոչ մի դեպքում չի կարելի ծխնելույզի մեջ ջուր ածել վերեվից ներքեվ, վորովհետև շիկացած աղյուսները ջրի ազդեցությամբ ճաքճաքում են, և կրակն այդ ճեղքվածքներից չերգահան է ժայթքում:

Նմանապես չի կարելի վերեվից փակել ծխնելույզը, վորովհետև թեժ կրակից գոյացած գազերը կրակի հետ միասին կարող են նետվել ներքև, վառարանի միջով տուն

մտնել կամ ծխնելույզը պայթեցնել չերդակում:

5. Յեթե վառվի թափված կերոսինը, բենզինը, սկիպիդարը կամ կրակի տեսակետից վտանգավոր մի ուրիշ յուղոս հեղուկ, նրան չպետք է ջրով հանգցնել, վորովհետև միևնույնն է նա ջրից չի վախենա և կշարունակի վառվել:

Ամենից լավն է վառված տեղը ծածկել ավազով, հողով կամ ձյունով:

Յեթե կրակը հանգցնելու այս միջոցները ձեռքի տակ չճարվեն, այդ դեպքում կրակը հարկավոր է ծածկել վերմակով, վերարկույով, գորգով և մի վորևե հաստ կտորով ու վրան ջուր թափել: Այն ժամանակ կրակը կհանգչի, վորովհետև վառվող հեղուկը զրկված կլինի ողի հոսանքից:

6. Յեթե վառվի մարդու վրա զգեստը, թույլ չպիտի տրվի, վոր նա փախչի, վորոհետև արագ շարժողությունից կրակն ավելի կսաստկանա:

Այսպիսի մարդուն հարկավոր է իսկույն փաթաթել հաստ հագուստի կամ վերմակի մեջ ու 2—3 րոպեյի չափ այդպես պահել, ապա զգուշությամբ հանել նրա այրված զգեստը և մարմնի այրված մասերին դնել

տորած կարտոֆիլ, հանգած կիր, սոդա: Այրված տեղում առաջացած բշտիկները չպետք է կլպել ու վրան ջուր ածել:

Յեթե այրվածքները մեծ են, վնասվածին անմիջապես պետք է հավանդանոց փոխադրել:

7. Յերբ այրվեն խիտ բարձած դեղերն ու բարդերը, կրակի ծավալումից շատ չպետք է վախենալ:

Առաջ հարկավոր է այրված մասի վերի շերտը թրջել, ապա քիչ-քիչ ամբողջ կույտն այս ու այն կողմ ցրել՝ ջրելով այն:

8. Յեթե տան մեջ հրդեհ ծագելիս՝ այնտեղ լինեն մանր յերեխաներ, ծերեր կամ հիվանդներ, առաջին հերթին հարկավոր է հոգ տանել փոխադրել նրանց հրդեհից հեռու մի ապահով տեղ:

Այրվողին կրակի միջից դուրս բերել հարկավոր է արագությամբ, վորևե բանի մեջ փաթաթած, վորպեսզի այրվածքից պահպանվի: Ինքը ինքը ապատողը նույնպես հագին ունենալու յե հաստ զգեստ և գդակ:

Այրվող շները մտնելուց առաջ, մարդ պետք է իր վրա ջուր ցանի և՛ ծխում խեղդամահ չլինելու համար՝ իրար վրա մի-

քանի անգամ խոր շունչ տոնի. այնուհետեւ արագութեամբ մտնելու յե ներս՝ աշխատելով շունչ չառնել այնտեղ, թե չէ կարող եւ վնասակար գաղ ներշնչել և ուշադնաց լինել:

9. Յերբ հարկավոր ե լինում ազատել բնտանի կենդանիներին, ապա ամենալավն ե, վոր այդ բանն ինքը տերն անի կամ այն մարդը, վորին անասունը ճանաչում ե. այս դեպքում անասունն ավելի հեշտութեամբ գուրս կգա դոմից:

Բայց ինչ ել լինի, հարկավոր ե այս դեպքում ել մի քանի նախազգուշական միջոցների դիմել. պետք ե անասունի աչքերը ծածկել պարկով, խսիրով կամ ուղղակի ձեռքով և արագորեն դուրս բերել նրան վտանգավոր տեղից:

Խոշոր անասուններին ազատելն ավելի հեշտ ե, վորովհետեւ նրանք քիչ են անհանգիստ լինում:

Փոքր անասուններին, ինչպես և խոշոր անասունների մատղաշներին ավելի լավ ե ձեռքի վրա դուրս հանել, վորովհետեւ նրանց մեկ-մեկ քշելը շատ յերկար կտևի, իսկ բոլորին միասին իբրև հոտ դուրս քշելը դժվար ե, վախից նրանք դեռ ու դեն կցրվեն:

Յեթե հնարավոր ե քանդել գոմի այն պատը, վոր վառված տեղի հակառակ կողմն ե, ապա հարկավոր ե առաջին հերթին այդ միջոցն ոգտագործել, վորովհետեւ անասունն իր առջև կրակ չտեսնելով՝ հեշտութեամբ գուրս կգա իր տեղից:

10. Հրդեհը հանգցնելիս հարկավոր ե դռնել նրա ոջաղն, այսինքն՝ նրա ծագման ու ավելի սաստկութեամբ վառված տեղը: Այդ դեպքում ավելի հաջողութեամբ և արագութեամբ կմարվի հրդեհը:

Ջուրը հարկավոր ե խնայողութեամբ թափել, վորովհետեւ գյուղում հրդեհները ժամանակ նա միշտ հերիք չի անում. բացի դրանից իզուր թափված ջուրը միայն դժվարացնում ե կրակը հանգցնելու գործը, վորովհետեւ դրա շնորհիվ դժվարանում են վառվող մասերի քանդումը, մյուս կողմից ել գուր տեղը թրջվում են չայրվող մասերը:

11. Կատարեցեք ոգնութեան հասած հրդեհաշեջ կազմակերպության բոլոր կարգադրությունները, մի՛ դիմադրեք և մի՛ մեղադրեք, յեթե նա արդեն ծավալված կրակը կանգնեցնելու և ամբողջ գյուղը փրկելու նպատակով՝ սկսի շենքեր քանդել, վորպեսզի բաց տարածութեամբ գյուղի այրվող մասը

բաժանի կրակից դեռ ազատ մնացած մասից։ Այսպիսի պայմաններում քանդված շենքերի համար, իբրև հրդեհից վնասվածների, ապահովագրական վարձատրություն է տրվում։

Ընդհանուր աշխատանքի ժամանակ աշխատեցեք ամենքին ոգնել։ աշխատանքը տարեք միահամուռ կերպով, այլ վոչ թե կանգնեք ձեր տան առաջ, յեթե նրան նույնիսկ կրակ էլ չի սպառնում։

Հետեվյալ անգամ, յերբ փորձանք պատահի ձեր գլխին, ձեր համագյուղացիներն այնպես կոգնեն ձեզ, ինչպես դուք ոգնեցիք նրանց։

12. Յերբ տրակտորային գարաժում հրդեհ պատահի, կամ այրվի մի առանձին տրակտոր, բենզին կամ կերոսին պարունակող մասերը ջրով մի հանգցնեք, այլ ավազով, հողով կամ քիմիական հրշեջ գործիքով։ Այրվող տրակտորը հարկավոր է հեռու տանել շենքերից, մյուս տրակտորներից և այն վայրերից, ուր կիզանյութեր կան։

13. Յեթե հրդեհվի չհնձված կամ դեզ արված հացը, հարկավոր է տրակտորի ուժով իսկույն վարել այրվող տեղամասը գութանով, փորպեսզի կրակի՝ հարեվան հացերի վրա անցնելու ճանապարհը փակված լինի։

Ահա այն բոլոր գլխավոր գիտելիքները, վոր

անհրաժեշտ է իմանալ հրդեհի դեմ պայքարելու դեպքում։

Մի անգամ ել ուշադրությամբ կարդացեք այն բոլորն, ինչվոր այստեղ գրված է և մշտեքում պահեցեք այն քիչ, բայց կարեվոր խորհուրդները, վոր առաջարկվում են։

Նրանք բոլորն ել հեշտ իրագործելի յեն և չժվար բաներ չեն։

ԻՆՁՈՎ ՀԱՆԳՑՆԵԼ ՀՐԴԵՀՆԵՐԸ ԿՈՒԼՈՁՆԵՐՈՒՄ


Այստեղ կարդացվածից արդեն հայտնի յե, վոր հրդեհներ հանգցնելու ամենալավ և ամենահեշտ միջոցը ջուրն է, վոր թե՛ զովացնում է վառվող առարկան և թե՛ հեռ է մղում նրանից ողը։ Իսկ առանց ողի այրում չի կարող տեղի ունենալ։ Ձմռանաք նույնպես, վոր ջուր միշտ պատրաստ պետք է ունենաք և վորքան կարելի յե շատ։

Սակայն կոլխոզային պայմաններում բոլոր այրվող նյութերը ջրով չեն հանգցվում։ Նյութալառ հեղուկները մարվում են վոչ թե ջրով, այլ հողով կամ ավազով։

Հրդեհի ժամանակ ջուրը կարելի յե թափել ուղղակի դույլերից, բայց սա տնտեսա-

բար վարվելու յեղանակ չե, վորովհետև ջուրը
դուր տեղ ե թափվում, հաճախ չհասնելով
այն տեղերին, վորտեղ նա ամենից ավելի
հարկավոր ե:

Հրդեհներ հանգցնելու համար ամե-
նից լավն ե կիրառել հրշեջ ջրհանները (պոմ-
պերը), վորոնցից ջրի շերթը նախ վոր ավելի



Նկ. 10. Ձեռքի հրշեջ ջրհան (պոմպ):

հեռուն ե խփում, ավելի տիպուկ ե և ուժեղ՝
քան դույլով ջրելիս, յերկրորդը՝ այդ յեղա-
նակի շնորհիվ՝ ջուրը հավասարաչափ բաշխ-
վելով՝ կրակն ամեն տեղ աստիճանաբար ե
հանգչում:

Այսպիսի պոմպեր անպատճառ պետք ե
լինեն բոլոր կոլխոզներում:

Ձեռքի հրշեջ պոմպը մեկ բոպեյում կարող
ե հասցնել 15—20 դույլ ջուր, իսկ ջրի շիթը
կարող ե խփել 30—40 մետր հեռավորու-
թյան վրա: Նա իր բոլոր պատկանելիքներով,
այսինքն՝ կաշե խողովակով, փողով, յեր-
կաթե ցանցով, ջուր հանող ճոճվող կոթերով
և այլն, արժե մոտ 400 ռուբլի:

Փոքր, դեռ նոր սկսված հրդեհները մարելու
համար ոգտակար եռնենալ փոքր հրշեջ պոմպ,
վոր կոչվում ե հիդրոպոմպ:

Այս պոմպը գործի դնելու համար բավա-
կան են 2—3 հոգին: Նա քիչ ջուր ե տալիս,
3—4 դույլ մի բոպեյում, բայց իր սրահոսան
շիթով խորը թափանցում ե վառվող զանգ-
վածի մեջ ու տնտեսաբար ե ծախսում ջուրը:

Պետք ե միայն նկատի ունենալ, վոր ինչ
պոմպ ել լինի, նա կարող ե ջրամբարից ջուրը
բարձրացնել վոչ ավելի, քան 8 մետր խորու-
թյունից, իսկ սովորաբար՝ 5—6 մետր խորու-
թյունից:

Դրա համար հարկավոր ե պոմպը վորքան
կարելի յե ավելի մոտ դնել ջրին:

Բացի ջուր հասցնող միջոցներից, հրդեհի
ժամանակ կիրառվում են սանդուղքներ, նի-
գեր, կարթաճողեր, կացիններ և այլն հրշեջ
գործիքներ:

Մի հարկանի շենքեր ունեցող կոլխոզների համար բավական են անծալ դնովի սանդուղքներ՝ չորս մետր յերկարությամբ: Յեթե կան 2—3 հարկանի շենքեր, ապա հարկավոր ե ունենալ քաշվող-ծալվող 2 և 3 ծնկավոր սանդուղքներ, վորոնք այնպես են շինված, վոր ծալված դիրքով 3—4 մետր յերկարություն ունեն, իսկ քաշված դիրքով, յերբ ծնկները մեկը միուսի վրա յեն հեծվում, նրանք հասնում են 3 հարկանի տների տանիքներին:

Այսպիսի սանդուղքները նրանով են հարմար, վոր փոխադրության ժամանակ քիչ տեղ են բռնում, իսկ հարկը պահանջած դեպքում հնարավորություն են տալիս բավական նշանավոր բարձրության հասնելու:

Սակայն այս սանդուղքները թանկ արժեն. նրանց գինը մոտ 300 ռուբլի յե (անծալ սանդուղքն արժե 120—130 ռուբլի):

Այրվող շենքերը քանդելու և դեպի հրդեհի ճարակած տեղը ճամբա բանալու համար ծառայում ե փանդող գործիք, վորին պատկանում են կարթածողերը, նիզերը և կացինները:

Նիզերը շինվում են կլոր յերկաթից կամ պողպատից, 1 դյույմ հաստությամբ և 1 մետր յերկարությամբ:

Կարթածողերը շինվում են կամ ամբողջովին յերկաթից, այսինքն յերկաթե կոթերով, կամ ագուցված են լինում 3—5 մետր յերկարություն ունեցող փայտե ձողի վրա:

Հրշեջ կացինները սովորական տան մեջ գործածվող կացիններից նախ տարբերվում են իրենց հաստապինդ բերանով, վոր նման ե վոշ թե կացնի, այլ ճեղքիչ տապարի, և յերկրորդ՝ բրիչով, այսինքն կարճ և սուր ատամով, վոր դոգած ե կոթառին: Այսպիսի կացինը շատ դիմացկուն ե լինում և կարող ե կիրառվել զանազան նպատակների համար՝ տանիքը բաց անելու, հաստ գերաններն, որինակ՝ ծպեղներն իրենց բնից դուրս գցել և այլն:

Վերը մենք հիշատակեցինք «Բողառիք» № 1, «Բողառիք» № 3 տիպի ձեռքի քիմիական հրշեջ գործիքների մասին:

Այս հրշեջ գործիքների հատկությունն ե մարել վոշ միայն կարծր առարկաները, այլե դյուրավառ հեղուկները՝ բենզինը, կերոսինը, նավթը և այլն:

Նա ժայթքում ե վոշ թե ջուր, այլ փրփուր, վորը ծածկում ե այրվող հեղուկը ե բաժանում ե նրանից ողը, վորով և հեղուկը զաղարու:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձգաչացիք հրդեհներէց	42
Ժնչլից և ինչպէս են ծագում հրդեհները	3
Վառարանների պատճառով ծագած հրդեհները	4
Ինչ տներ, վոր վառարանների պատճառով հրդեհներ չծագեն	6
Լուսավորության պատճառով ծագած հրդեհները	12
Ինչ պետք և անել, վոր լուսավորության պատճառով հրդեհներ չծագեն	19
Պրակի հետ առողջույն վարվելու պատճառով ծագած հրդեհները	20
Յերեխտների չարության պատճառով ծագած հրդեհները	31
Հրձուռնները (կրակ տալը)	36
Պայծակից առաջացած հրդեհները	38
Գյուղական վայրերում հրդեհների տարածման դեմ կի- րարկվող միջոցները	40
Հրդեհների արտադրական պատճառները կոխողներում ու նրանց դեմ պայքարը	41
Ինչ միջոցառումներ հարկավոր և կիրառել հրդեհ ծագե- լու դեպքում	49
Ինչպիսի Կանգնել հրդեհները կոխողներում	67
	77

ԸՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ,

Հայսնիր ֆո կարծիքն այս գրքի մասին հե-
տևյալ հասցեյով.

Гор. Ростов-Дон, Буденновский пр.
№ 30, Азово-черноморское Краевое
Книгоиздательство, армянская секция.

Նամակներ կաղելի յե ուղարկել անանց
համակարգումի:

Ответ. редактор Г. А. Потениц
Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание № 490/4850. Слано в набор 30 декабря 1935 г.
Подписано с печать 27 января 1936 г. Формат — А6
105x148 Об'ем 2 $\frac{5}{8}$ п. л. Тираж 1500. Уполжрайлит
00-114487. Заказ 6108.

Типография им. Стачки 1902 года в г. Ростов н-Д.

ՀՀ Ազգային գրադարան



NL0209892

Цена
ԳԻՆԸ 60 коп.
400.

45 29

30. 727

На армянском языке

С. П. ЯРОСЛАВСКИЙ

**ПАМЯТКА КОЛХОЗНИКА ПО
БОРЬБЕ С ПОЖАРАМИ**

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**
Ростов н-Д Буденновский пр. № 30

Չ Բ Ա Պ Ա Հ Ե Ս Ը
Որստով-Դոն, Մոսկովսկայա, № 30
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)